

**«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲԸ**

**Համախմբված ֆինանսական հաշվետվություններ**

*2019 թվականի դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար  
Անկախ առողիստրական եզրակացության հետ միասին*

## Բովանդակություն

### Անկախ առևտիստրական եզրակացություն

Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն .....	1
Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն .....	2
Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն .....	3
Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն .....	4

### Համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններ

1. Հիմնական գործունեության նկարագրություն .....	5
2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները .....	5
3. Համախմբման հիմունքներ .....	7
4. Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ .....	8
5. Տեղեկատվություն գործունեության ոլորտի վերաբերյալ .....	10
6. Հասույթ .....	11
7. Վաճառքի ինքնարժեք .....	11
8. Իրացման ծախսեր .....	12
9. Վարչական ծախսեր .....	12
10. Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին .....	13
11. Այլ ծախսեր և այլ եկամուտներ .....	13
12. Ֆինանսական եկամուտ և ֆինանսական ծախսեր .....	14
13. Աշխատավագլի գծով ծախսեր .....	14
14. Շահութահարկ .....	14
15. Հիմնական միջոցներ .....	18
16. Մակարացման գործունեության ակտիվ .....	19
17. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ներդրումներ և վաճառքի համար մատչելի ներդրումներ .....	19
18. Կանխավճարներ .....	20
19. Տրամադրված փոխառություններ .....	20
20. Պաշարներ .....	21
21. Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր .....	21
22. Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ .....	23
23. Կապիտալ և պահուածներ .....	23
24. Թողարկված պարտասումներ .....	24
25. Վարկեր և փոխառություններ .....	24
26. Պահուածներ .....	26
27. Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներ .....	27
28. Առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր .....	28
29. Վարձակալության պարտավորություններ .....	28
30. Պայմանագրային պարտավորություններ .....	28
31. Իրական արժեք և ռիսկերի կառավարում .....	31
32. Պայմանական պարտավորություններ .....	40
33. Գործառնական ռիսկեր .....	41
34. Կապակցված կողմեր .....	42
35. Հաշվապահական հաշվառման քաղաքականության և բացահայտումների փոփոխություններ .....	45
36. Հաշվետու ժամանակաշրջանից հետո տեղի ունեցած իրադրածություններ .....	47
37. Հրապարակված, բայց դեռևս ուժի մեջ չմտած ստանդարտներ .....	48
38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիր .....	49



Կառուցելով  
բարեկեցիկ աշխարհ

Ernst & Young C.A.S.C  
1 Northern Ave., office 27  
Yerevan, 0011, Armenia  
Tel: +374 (10) 500 790  
+374 (10) 500 705  
Fax: +374 (10) 500 706  
[www.ey.com/arm](http://www.ey.com/arm)

ՀՀ նոր ընդ Յանձ ՓԲԸ  
ՀՀ գ. Երևան 0001  
Հայաստանի պետ. 1, գրանիում 27  
Հեռ. +374 (10) 500 700  
+374 (10) 500 705  
Ֆաקס. +374 (10) 500 706

## Անկախ առողջատորական եզրակացություն

«Զանգեզուրի պղնձամոլիրդենային կոմբինատ փակ բաժնետիրական ԽՄԲԻ Տնօրենների Խորհրդին և բաժնետերերին

### Կարծիք

Մենք առողջատի ենք ենթարկել «Զանգեզուրի պղնձամոլիրդենային կոմբինատ» ՓԲ Ընկերության և նրա դուստր ընկերության (այսուհետ՝ «Խումբ») համախմբված ֆինանսական հաշվետվությունները, որոնք ներառում են 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունը, նույն ամսաթվին ավարտված տարվա համապարփակ ֆինանսական արդյունքների, սեփական կապիտալում փոփոխությունների և դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվությունները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

Մեր կարծիքով, կից համախմբված ֆինանսական հաշվետվությունները բոլոր էական առումներով ճշմարիտ են ներկայացնում ԽՄԲԻ համախմբված ֆինանսական վիճակը 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, նույն ամսաթվին ավարտված տարվա համախմբված ֆինանսական արդյունքները և համախմբված դրամական միջոցների հոսքերը՝ համաձայն Ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրությունները՝ ներառյալ հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը:

### Կարծիքի հիմքեր

Մենք առողջատն իրականացրել ենք Առողջատի միջազգային ստանդարտներին (ԱՍՍ-ներ) համապատասխան: Այդ ստանդարտներից բխող մեր պատասխանատվությունը նկարագրված է այս եզրակացության «Առողջատորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների առողջատի համար» բաժնում:

Մենք անկախ ենք ԽՄԲԻց՝ համաձայն Հաշվապահների երիկայի միջազգային ստանդարտների խորհրդի կողմից հրապարակված Դրոֆեսիոնալ հաշվապահի էթիկայի կանոնագրքի, ներառյալ Անկախության միջազգային ստանդարտները, (ՀԷՄՍԻ կանոնագիրը), և պահպանել ենք երիկայի այլ պահանջները՝ համաձայն ՀԷՄՍԻ կանոնների:

Մենք համոզված ենք, որ մեր կողմից ձեռք բերված առողջատորական ապացույցները բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքն արտահայտելու համար:

## Առողջական հարցեր

Առողջական հարցերն այն հարցերն են, որոնք, մեր մասնագիտական դասողության համաձայն, առավել նշանակալի են ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների առողջականությամբ: Այդ հարցերը դիտարկվել են համախմբված ֆինանսական հաշվետվությունների առողջականությունը՝ որպես մեկ ամբողջություն, և համախմբված հաշվետվությունների վերաբերյալ կարծիք ձևավորելու նպատակով: Մենք չենք տրամադրում առանձին կարծիք այդ հարցերի վերաբերյալ: Մեր նկարազրությունը, թե ինչպես է ստորև նշված յուրաքանչյուր հարցը դիտարկվել մեր առողջականությունը, ներկայացված է այդ համատեքստում:

Մենք կատարել ենք մեր պարտականությունները, որոնք նկարազրված են «Առողջական պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների առողջականությունը» բաժնում, այդ թվում այդ հարցերի վերաբերյալ: Համապատասխանաբար, մեր առողջականությունը կ ընթացակարգերի իրականացնել մշակված ի պատասխան համախմբված ֆինանսական հաշվետվությունների կական խեղաթյուրման ռիսկի մեր գնահատմանը:

Մեր առողջական ընթացակարգերի արդյունքները, այդ թվում ստորև ներկայացված հարցերը դիտարկելիս իրականացրած ընթացակարգերը, հիմք են հանդիսանում կից համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ առողջական կարծիք արտահայտելու համար:

### Առանցքային դասողությունները

#### Հասույթի ճանաչում, ներառյալ՝ կապակցված կողմերի հետ գործարքներ

Պղնձի, մոլիբդենի և ֆերոմոլիբդենի վաճառքից հասույթը եղել է մեր առողջական հարցերից մեկը: Մենք այդ ոլորտը դասել ենք ուշադրության կենտրոնում՝ պայմանավորված գործարքների մեծ ծավալով, որոնք ներառել են պայմանական զնանշմարք պայմանագրեր ու հատուցման գործարիք բարդ հաշվարկներ: Հասույթի չափը կախված է զնանշման ժամանակաշրջանի ընթացքում ապրանքների ապագա զների փոփոխությունից, ինչը դեկավարությունից պահանջում է կիրառել էական դասողություններ հաշվետու ժամանակաշրջանի վերջում պայմանական զները:

Յուրաքանչյուր պայմանագրի համար դեկավարությունը որոշում է կատարման պարտավորություններն ու գործարքի գինը, և հասույթը ճանաչվում է կատարման պարտավորությունների բավարարմանը գույքներաց: Ի լրացն, էական ծավալով վաճառքներ իրականացվել են կապակցված կողմերին:

Հասույթի և կապակցված կողմերի հետ գործարքների մասին տեղեկատվությունը ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվությունների 6, 30 և 34 ծանոթագրություններում:

### Մեր իրականացրած գործընթացները

Առողջական դասույթը մենք իրականացրել ենք հետևյալ ընթացակարգերը:

- ▶ Մենք վերլուծել ենք հասույթի ճանաչմանն առնչվող հաշվապահական քաղաքականությանները,
- ▶ Մենք ուսումնասիրել ենք հաճախորդների հետ ընտրված պայմանագրեր՝ հասկանալու գործարքների պայմանները,
- ▶ Մենք իրականացրել ենք հասույթի ճանաչման գործընթացին առնչվող ներքին հսկողության արդյունավետության ստուգում,
- ▶ Ընտրանքի հիմն վրա՝ մենք համեմատել ենք վաճառքի հաշվված պարագաներում արտացոլված գործարքի մասին տեղեկատվությունը պայմանագրի պայմանների և ապրանքների զների հետ,
- ▶ Մենք գնորդներից ստացել ենք հաստատական նամակներ և համեմատել ենք գնորդների կողմից հաստատված վաճառքի ծավալները, տարվա հասույթը և տարեվերջի մնացորդները հաշվապահական գրանցումների հետ,
- ▶ Մենք վերահաշվարկել ենք պայմանական զնանշմանը ներական հասույթի գումարը,

## Առանցքային դատողությունները

## Մեր իրականացրած գործոնթացները

- Անմիջապես տարեկերչից առաջ և տարեկերչից հետո տեղի ունեցած վաճառքի գործարքների համար մենք վերլուծել ենք,թե որ ժամանակաշրջանին է վերաբերում հասույթը,
- Մենք վերլուծել ենք կատարման պարտավորությունների բավարարումը և վաճառքների պայմանագրերով ճանաչված հասույթը,
- Մենք վերլուծել ենք կապակցված կողմերի հետ վաճառքի գործարքները և դրանց բացահայտումը համախմբված ֆինանսական հաշվետվությունների 34 ծանոթագրությունում,
- Մենք վերլուծել ենք հասույթի մասին տեղեկատվությունը՝ բացահայտված համախմբված ֆինանսական հաշվետվությունների 6 ծանոթագրությունում:

### Պաշարների արժեքի իջեցումը մինչև Իրացման գույն արժեք (ԻԶԱ)

Մենք պաշարների արժեքի իջեցումը մինչև ԻԶԱ դասել ենք որպես մեր առողջական հարցերից մեկը՝ պայմանավորված ԽՄԲի դեկապարության կողմից դանդաղ շարժ ունեցող ու հնացած պաշարների հայտնաբերման և պաշարների արժեքի՝ մինչև ԻԶԱ իջեցման գնահատմանը ուղղված էական դատողությունների կիրառմամբ։ Այդպիսի դատողությունները ներառում են դեկապարության սպասումները գործունեության համար անհրաժեշտ պաշարների և վաճառքի համար մատչելի պաշարների վերաբերյալ։ Ի լրումն, դեկապարությունը գնահատում է ակնկալվող շուկայական պահանջարկը՝ հաշվի առնելով շուկայական պայմանների փոփոխությունները, տեխնոլոգիաները և վերջին հասանելի գները։ Պաշարների մասին տեղեկատվությունը ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվությունների 20 ծանոթագրությունում։

Մեր կողմից իրականացրած ընթացակարգերը՝ կապված պաշարների գնահատման համապատասխանության հետ, ներառել են.

- Գլխավոր տեղանքներում պաշարների գույքագրմանը՝ մասնակցությունը և պաշարների ֆիզիկական վիճակի դիտարկումը, ներառյալ ընտրանքային հիմունքով ընտրած պաշարների ինքնարժեքի և հաշվեկշռային արժեքի վերլուծությունը,
- Հնացած պաշարների հայտնաբերման ուղղված դեկապարության կողմից կիրառվող հիմունքների և ԽՄԲի դեկապարության կողմից սահմանված պաշարների սպասվող ավելցուկի պարզաբանումը,
- Հնացած պաշարների հայտնաբերման նպատակով ԽՄԲի դեկապարության կողմից կիրառված պաշարների հնեցման վերլուծության ճշգրտության ընտրանքային ստուգում,
- Ընթացիկ ժամանակաշրջանում պաշարների դուրսգրամների համեմատությունը՝ պաշարների դուրսգրման պատմական տվյալների հետ,
- Պաշարների արժեքի՝ ԻԶԱ-ին իջեցման մաթեմատիկական ճշգրտության ընտրանքային ստուգում,
- Մենք վերլուծել ենք պաշարների վերաբերյալ բացահայտումները համախմբված ֆինանսական հաշվետվություններում։



Կառուցելով  
բարեկեցիկ աշխարհ

## Առանցքային դատողությունները

### **Տոկոսակիր պարտավորությունները**

Խումբը ունի էական տոկոսակիր պարտավորություններ 2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ: Հաշվետու տարվա ընթացքում Խումբը թողարկել է տարբեր պայմաններով 26 միջարդ ՀՀ դրամը գերազանցող պարտատոմսեր: Հաշվետու տարվա ընթացքում Խումբը ունեցել է 10.2 միջարդ ֆինանսավորման և տոկոսային ծախսեր, որից 8.8 միջարդ ՀՀ դրամը ճանաչվել է համախմբված ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, իսկ 1.4 միջարդ ՀՀ դրամը կայտալացվել է կառուցման մեջ գտնվող ակտիվներին: Այս հարցը եղել է մեր առողիտի ամենաէական հարցերից մեկը այդ պարտավորությունների մնացորդների էականության և պարտասումների թողարկման ու վարկային պայմանագրերին հատուկ բարդության պատճառով:

Փոխառությունների և դրանց հետ կապված ֆինանսական ծախսերի մասին տեղեկատվությունը ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվությունների 12, 24 և 25 ծանոթագրություններում:

## Մեր իրականացրած գործընթացները

Մեր կողմից իրականացրած ընթացակարգերը ներառել են.

- ▶ Բանկերից հաստատական նամակների ձեռքբերումը և դրանցում ներկայացված պարտավորությունների մնացորդների, հաշվեգրված տոկոսների, ժամկետների ու պայմանների համեմատությունը հաշվապահական համակարգերում արտացոլված տվյալների հետ,
- ▶ Ֆինանսավորողների հետ փոխառության պայմանագրերի ուսումնագիրում՝ վարկային գերին առնչվող պայմանների հասկացողության համար,
- ▶ Պարտավորությունների մնացորդների՝ ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգման վերլուծություն,
- ▶ Համախմբված շահույթի կամ վնասի և այլ համապարփակ եկամտի հաշվետվության մեջ ճանաչած տոկոսի վերահաշվարկ,
- ▶ Փոխառությունների կայտալացված ծախսումների հաշվարկի մաթեմատիկական ճշգրտության ստուգում,
- ▶ Տոկոսակիր պարտավորությունների բացահայտումների վերլուծություն, որոնք ներկայացված են համախմբված ֆինանսական հաշվետվություններում:

### **Տեղանքի վերականգնման և վերակառուցման պահուստները**

Խումբը ներգրավված է հանքարդյունաբերության, մետաղի վերամշակման և առաջնային ֆերրոմոլիբդենի արտադրության մեջ: Ենելով իր գործառնությունների բնույթից Խումբը ստանձնում է պարտավորություններ՝ փակելու, վերականգնելու և վերակառուցելու իր հանքի տեղանքը: Հանքի փակման և վերակառուցման գործունեությունը կառավարվում է օրենսդրական պահանջներով: Հանքի կյանքի և պաշարների վերաբերյալ էական գնահատումներ են կատարվում Խումբի կողմից իր վերականգնման պահուստը որոշելու համար:

Մենք դասել ենք վերականգնման ու վերակառուցման պահուստը մեր առողիտի նշանակայի հարցերին՝ ենելով այսպիսի պարտավորությունների շրջանակների ու ժամկետների անորոշությունից և պատմական տվյալների սահմանափակ հասանելիությունից: Տեղանքի վերականգնման և վերակառուցման պահուստների մասին տեղեկատվությունը ներկայացված է համախմբված ֆինանսական հաշվետվությունների 26 ծանոթագրությունում:

Մեր կողմից իրականացրած ընթացակարգերը, ի թիվս այլոց, ներառել են.

- ▶ Հանքի տեղանքի վերականգնման ու վերակառուցման համար սահմանված ծախսերի և վերակառուցման ակնկալվող ժամկետների վերլուծություն,
- ▶ հաշվարկներում կիրառված տնտեսական ենթադրությունների գնահատում, ներառյալ՝ զեղչման տոկոսը, զնամի տոկոսը, որոնք կիրառվել են պահուստի գուտ ներկա արժեքը հաշվարկելու համար,
- ▶ Ռիտարկել լրացրւիչ վնասը, որ հասկացվել է ընթացիկ ժամանակաշրջանի ընթացքում և ապագայում պահանջում է լրացրւիչ վերականգնում,
- ▶ Պահուստների հաշվարկման համար կիրառված մոդելների մաթեմատիկական ճշգրտության ստուգում,
- ▶ Պահուստների վերաբերյալ բացահայտումների համապատասխանության վերլուծություն:



Կառուցելով  
բարեկեցիկ աշխարհ

## **Խմբի 2019թ. Տարեկան հաշվետվության մեջ ներառված այլ տեղեկատվություն**

Այլ տեղեկատվությունը ներառում է Տարեկան հաշվետվության մեջ ներառված տեղեկատվությունը, բացի ֆինանսական հաշվետվություններից և դրանց վերաբերյալ մեր առողջութրական եզրակացությունից: Դեկավարությունը պատասխանառու է այլ տեղեկատվության համար: Ակնկալվում է, որ Տարեկան հաշվետվությունը մեզ կտրամադրվի առողջութրական եզրակացության ամսաթվից հետո:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ մեր կարծիքը չի տարածվում այլ տեղեկատվության վրա, և մենք այդ տեղեկատվության վերաբերյալ չենք տրամադրում կարծիք, որը որևէ ձևով կարտահայտի հավաստիացում տվյալ տեղեկատվության վերաբերյալ:

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների մեր առողիտի հետ կապված, մեր պարտավորությունն է ծանոթանալ վերտնշյալ այլ տեղեկատվությանը, և դրանով դիտարկել, թե արդյոք առկա են էական անհամապատասխանություններ այլ տեղեկատվության և համախմբված ֆինանսական հաշվետվությունների կամ առողիտի ընթացքում ձեռք բերված մեր գիտելիքների միջն, և թե արդյոք այլ տեղեկատվությունը պարունակում է այլ էական խեղաթյուրումներ:

## **Դեկավարության և Տնօրենների Խորհրդի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների համար**

Դեկավարությունը պատասխանառու է ՖՀՀՍՍ-ների համաձայն համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստման և ճշմարիտ ներկայացման և այնպիսի ներքին հսկողության համակարգի համար, որը, բայց դեկավարության, անհրաժեշտ է խարդախության կամ սխալի հետևանքով առաջացած էական խեղաթյուրումներից զերծ համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումն ապահովելու համար:

Համախմբված ֆինանսական հաշվետվություններ պատրաստելիս դեկավարությունը պատասխանառու է Խմբի անընդհատ գործելու կարողությունը գնահատելու համար, համապատասխան դեպքերում անընդհատ գործելու հետ կապված հարցերը բացահայտելու և կազմակերպության գործունեության անընդհատության ենթադրության հիման վրա հաշվետվությունները պատրաստելու համար, բացառությամբ այն դեպքերի, երբ դեկավարությունը մտադիր է լրացնել Խորհրդը, ընդհատել դրա գործունեությունը, կամ երբ չունի այդպես չվարվելու որևէ իրատեսական այլընտրանք:

Տնօրենների Խորհրդը պատասխանառու է Խմբի ֆինանսական հաշվետվությունների պատրաստման գործընթացի նկատմամբ վերահսկողության համար:



Կառուցելով  
բարեկեցիկ աշխարհ

## **Առևիտորի պատասխանատվությունը համախմբված ֆինանսական հաշվետվությունների առևիտի համար**

Մեր նպատակն է ձեռք բերել ողջամիտ հավաստիացում առ այն, որ համախմբված ֆինանսական հաշվետվությունները, ամբողջությամբ վերցրած, զերծ են կական խեղաթյուրումից՝ անկախ դրանց խարդախության կամ սխալի հետևանքով առաջացման հանգամանքից, և ներկայացնել մեր կարծիքը ներառող առևիտորական եզրակացություն։ Ողջամիտ հավաստիացումը բարձր մակարդակի հավաստիացում է, բայց այն չի երաշխավորում, որ Առևիտի միջազգային ստանդարտներին համաձայն իրականացրած առևիտը միշտ կհայտնաբերի կական խեղաթյուրումը, եթե այն առկա է։ Խեղաթյուրումները կարող են առաջանալ խարդախության կամ սխալի հետևանքով և համարվում են կական, եթե խեղամտորեն կարող է ակնկալվել, որ դրանք, առանձին կամ միասին վերցրած, կազդեն ֆինանսական հաշվետվություններն օգտագործողների սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիման վրա կայացվող տնտեսական որոշումների վրա։

ԱՍՍ-ների համաձայն իրականացրած առևիտի ողջ ընթացքում կիրառում ենք մասնագիտական դատողություն և պահպանում մասնագիտական կասկածամություն։

Ի լրում՝

- ▶ հատկորոշում և գնահատում ենք խարդախության կամ սխալի հետևանքով համախմբված ֆինանսական հաշվետվությունների կական խեղաթյուրման ռիսկերը, նախագծում և իրականացնում ենք առևիտորական ընթացակարգեր այդ ռիսկերին արձագանքելու նպատակով, և ձեռք ենք բերում առևիտորական ապացույցներ, որոնք բավարար և համապատասխան հիմք են հանդիսանում մեր կարծիքի համար։ Խարդախության հետևանքով առաջացած կական խեղաթյուրման չքացահայուման ռիսկն ավելի բարձր է, քան սխալի հետևանքով կական խեղաթյուրման չքացահայուման ռիսկը, քանի որ խարդախությունը կարող է ներառել հանցավոր համաձայնություն, զեղծարարություն, միտումնավոր բացթողումներ, սխալ ներկայացումներ կամ ներքին հսկողության համակարգի չարաշահում,
- ▶ ձեռք ենք բերում առևիտին վերաբերող ներքին հսկողության մասին պատկերացում՝ տվյալ հանգամանքներին համապատասխան առևիտորական ընթացակարգեր նախագծելու, և ոչ թե Խմբի ներքին հսկողության արդյունավետության վերաբերյալ կարծիք արտահայտելու համար,
- ▶ գնահատում ենք հաշվապահական հաշվառման կիրառված քաղաքականության տեղին լինելը, ինչպես նաև դեկավարության կողմից կատարած հաշվապահական հաշվառման գնահատումների և կից բացահայտումների խեղամտությունը,



Կառուցելով  
բարեկեցիկ աշխատի

- ▶ Եզրահանգում ենք դեկավարության կողմից հաշվապահական հաշվառման անընդհատության սկզբունքի կիրառման տեղին լինելու վերաբերյալ և հիմնվելով ձեռք բերված առողջապահական ապացույցների վրա գնահատում ենք, թե արդյոք առկա է դեպքերի կամ հանգամանքների հետ կապված էական անորոշություն, որը կարող է էական կասկած հարուցել Խմբի անընդհատ գործելու կարողության վերաբերյալ: Եթե մենք եզրահանգում ենք, որ առկա է էական անորոշություն, ապա մեզանից պահանջվում է առողջապահական եզրակացությունում ուշադրություն հրավիրել համախմբված ֆինանսական հաշվետվությունների համապատասխան բացահայտումներին, կամ, եթե այդ բացահայտումները համապատասխան չեն, ձեափոխել մեր կարծիքը: Մեր եզրահանգումները հիմնված են մինչև մեր առողջապահական եզրակացության ամսաթիվը ձեռք բերված առողջապահական ապացույցների վրա: Սակայն, ապագա իրադարձություններն ու հանգամանքները կարող են հանգեցնել Խմբի գործունեության անընդհատության դադարեցմանը,
- ▶ Գնահատում ենք համախմբված ֆինանսական հաշվետվությունների ընդհանուր ներկայացումը, կառուցվածքն ու բովանդակությունը, ներառյալ՝ բացահայտումները, ինչպես նաև համախմբված ֆինանսական հաշվետվությունների հիմքում ընկած գործարքների ու դեպքերի ճշմարիտ ներկայացումը,
- ▶ Ճեղք ենք բերում բավարար համապատասխան առողջապահական ապացույցներ Խմբի ներսում գործող կազմակերպությունների կամ ձեռնարկատիրական գործունեությունների ֆինանսական տեղեկատվության վերաբերյալ՝ համախմբված ֆինանսական հաշվետվությունների վերաբերյալ կարծիք արտահայտելու նպատակով: Մենք պատասխանատու ենք Խմբի առողջատի ուղղորդման, դեկավարման և իրականացման համար: Մենք ամբողջովին պատասխանատու ենք մեր առողջապահական կարծիքի համար:

Տնօրենների խորհրդին, ի թիվս այլ հարցերի, հաղորդակցում ենք առողջատի առաջադրանքի պլանավորված շրջանակի և ժամկետների, ինչպես նաև առողջատի ընթացքում հայտնաբերված նշանակալի հարցերի, ներառյալ՝ ներքին հսկողությանը վերաբերող նշանակալի թերությունների մասին:

Տնօրենների խորհրդին նաև տրամադրում ենք հավաստիացում, որ պահպանել ենք անկախության վերաբերյալ էթիկայի պահանջները, ինչպես նաև նրանց տեղեկացնում ենք բոլոր հարաբերությունների կամ այլ հարցերի մասին, որոնք ըստ ողջամիտ ենթադրության, կարող են անդրադառնալ մեր անկախության վրա, և որտեղ կիրառելի է, անկախության պահպանմանն ուղղված միջոցառումների վերաբերյալ:



## Կառուցելով բարեկեցիկ աշխարհ

Տնօրենների խորհրդին հաղորդակցված հարցերից որոշում ենք այն հարցերը, որոնք համարվել են առավել նշանակալի ընթացիկ ժամանակաշրջանի համախմբված ֆինանսական հաշվետվությունների առլիսի ընթացում, և հետևաբար հանդիսանում են առլիսի առանցքային հարցեր: Մենք նկարագրում ենք այդ հարցերը մեր առլիսիորական եզրակացությունում, բացառությամբ այն դեպքերի, երբ օրենքով կամ կարգավորող ակտերով արգելված է այդպիսի հարցերի հրապարակային բացահայտումը, կամ, երբ, ինչստ բացառիկ հանգամանքներում, որոշում ենք, որ տվյալ հարցը չպետք է ներկայացվի առլիսիորի եզրակացությունում, քանի որ կարող է ողջամտորեն ակնկալվել, որ դրա ներկայացման հետ կապված բացասական հետևանքները ավելի շատ կլինեն, քան դրա ներկայացումից հանրային օգուտը:

Այս առևիտի առաջարրանքի պատճակնատուն Քսենիա Բագինյանն է:

## «Էրնսթ ընդ Յանգ» ՓԲԸ

ՀՀ, ք. Երևան

## Առաջինի բաժնի հիմնադիր գործընկեր Գևակող տնօրեն՝

*Luglio*

Էրիկ Հայրապետյան

Առաջինի բաժնի հիմնադիր գործընկեր

18 մայիս, 2020թ.

Բարենիան Բարենիան

KOY



Ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվություն

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ

	<i>Ծառ.</i>	<i>2019թ.</i>	<i>2018թ.</i>
<b>Ակտիվներ</b>			
Հիմնական միջոցներ	15	217,068,784	209,084,432
Անկարաբաշման գրքունեության ակտիվ	16	5,310,400	4,090,780
Դաշտիներ	20	13,156,653	12,469,763
Ոչ նյութական աւտոիլներ		393,104	408,203
Իրական արժեքով՝ շահուարի կամ վսասի միջոցով չափվող նեյտրումներ	17	777,159	877,159
Վախճականընթեր ոչ ընթացիկ ակտիվների գծով	18	1,879,578	3,352,442
Տրամադրված փայտառթուններ	19	274,901	5,573,313
Գովազդային ԱԱՀ		292,084	944,875
Խնմուրայի և այլ գերիշորական պարտքեր		50	
Այլ ոչ ընթացիկ ակտիվներ		193,448	51,000
<b>Ոչ ընթացիկ ակտիվներ</b>		<b>239,346,161</b>	<b>236,851,967</b>
<b>Պաշտոնական գումարներ</b>			
Վախճական գումարներ այլ հարկերի գծով	20	24,099,861	20,431,684
Գովազդային ԱԱՀ		379,801	392,188
Հետաձգված ԱԱՀ		2,026,389	3,396,316
Աննորայի և այլ դեբյուրական պարտքեր		461,305	525,279
Կախական գումարներ ընթացիկ ակտիվների գծով	21	9,919,327	9,600,820
Տրամադրված փայտառթուններ	18	7,079,322	6,805,004
Իրական արժեքով՝ շահուարի կամ վսասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ	19	9,851,274	3,341,837
Դրամական միջոցներ և դրամարժեքներ			
Այլ ընթացիկ ակտիվներ	22	5,462,981	525,227
		1,450	1,611
<b>Ընդունակ գումարներ</b>		<b>59,281,710</b>	<b>45,274,834</b>
<b>Ընդունակ գումարներ</b>		<b>298,627,871</b>	<b>282,126,801</b>
<b>Սեփական կապիտալ</b>			
<b>Սեփական կապիտալ</b>			
Գումարական կապիտալ	23	54,966,680	54,966,680
Հետովանդակ բանկնումներ	23	(41,225,060)	
Կուտակված շահույթ		2,539,512	51,016,078
Ընդունակ բանկնումներ		<b>16,281,132</b>	<b>105,982,758</b>
<b>Տարրատվարություններ</b>			
Թողարկված պարտատուններ	24	24,176,835	
Վարկեր և փայտառթուններ	25	33,139,355	23,757,102
Պահուաններ	26	3,267,194	3,236,671
Վարձակաբուժան պարտադրություններ	29	2,153,015	2,138,218
Պահանգության պարտադրություններ	30	9,656,580	39,157,288
Հետաձգված հարկային պարտավորություններ	14	10,964,709	12,978,254
Հետզիմած բանկնումների գծով պարտավորություններ	23	19,116,375	
Այլ ֆինանսական պարտավորություններ	30	41,283,566	
<b>Ոչ ընթացիկ պարտավորություններ</b>		<b>143,757,629</b>	<b>81,267,533</b>
<b>Թողարկված պարտատուններ</b>			
Վարկեր և փայտառթուններ	24	2,070,073	
Իրական արժեքով՝ շահուարի կամ վսասի միջոցով չափվող ֆինանսական պարտադրություններ	25	48,943,932	43,591,519
Վահական պարտադրության պարտավորություններ	26	332,277	406,804
Վարձակաբուժան պարտավորություններ	29	936,873	927,246
Պահանգության պարտավորություններ	30	19,198,586	22,809,090
Պարտավորություններ և հետաքարտի գծով		1,346,896	
Հետզիմած բանկնումների գծով պարտավորություններ	23	3,540,215	1,939,170
Առևտնային և այլ կրեդիտարական պարտքեր	28	28,733,855	25,202,681
Այլ ֆինանսական պարտավորություններ	30	9,085,037	
<b>Ընթացիկ պարտավորություններ</b>		<b>138,589,110</b>	<b>94,876,510</b>
<b>Ընդունակ պարտավորություններ</b>		<b>282,346,739</b>	<b>176,144,043</b>
<b>Ընդունակ սեփական կապիտալ և առաջարկություններ</b>		<b>298,627,871</b>	<b>282,126,801</b>

Հաստիացնելու և ստորագրելու է Խմբ պեղական քայլած համարը՝ 202

## Միեր Պալսկով



գան Մարության

**Համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվություն  
2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

<b>Խազ դրամ</b>	<b>Ծան.</b>	<b>2019թ.</b>	<b>2018թ.</b>
Հասույթ	6	195,827,666	199,900,935
Վաճառքի ինքնարժեք	7	(130,972,416)	(103,087,295)
Համախառն շահույթ		<b>64,855,250</b>	<b>96,813,640</b>
Իրացման ծախսեր	8	(12,638,613)	(10,252,977)
Վարչական ծախսեր	9	(14,945,937)	(14,339,312)
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	10	(6,508,522)	(7,900,100)
Այլ գործառնական եկամուտ	11	761,354	1,333,215
Այլ գործառնական ծախսեր	11	(30,936,246)	(32,353,872)
Ակնկալվող վարկային կորուստներ	19, 21	257,970	(394,771)
Գործառնական գործունեությունից շահույթ		<b>845,256</b>	<b>32,905,823</b>
Զուտ եկամուտ/կորուստ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ շափկող ֆինանսական գործիքներից	27	(666,683)	3,093,339
Եկամուտ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով՝ շափկող ներդրումներից	17	72,373	65,793
Ֆինանսական եկամուտ	12	810,670	514,796
Ֆինանսական ծախսեր	12	(8,852,826)	(12,395,745)
Զուտ եկամուտ փոխարժեքային տարբերություններից		639,785	88,079
Շահույթ նախքան շահութահարկով հարկումը		<b>(7,151,425)</b>	<b>24,272,085</b>
Շահութահարկի գծով ծախս	14	(7,411,287)	(8,733,843)
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ (վնաս)/շահույթ		<b>(14,562,712)</b>	<b>15,538,242</b>
Այլ համապարփակ եկամուտ		<b>-</b>	<b>-</b>
Հաշվետու տարվա ընդամենը համապարփակ (վնաս)/շահույթ		<b>(14,562,712)</b>	<b>15,538,242</b>

**Սեփական կապիտալում փոփոխությունների մասին համախմբված հաշվետվություն****2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

<i>հազ. դրամ</i>	<i>Կանոնադրական կապիտալ (Ծան. 23)</i>	<i>Հետզեկած կապիտալ (Ծան. 23)</i>	<i>Կուտակված շահույթ</i>	<i>Ընդամենը</i>
2018թ. հունվարի 1-ի դրությամբ Ըստամենը հաշվետու տարվա համապարփակ շահույթ	54,966,680	-	35,477,836	90,444,516
2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>54,966,680</u>	<u>-</u>	<u>51,016,078</u>	<u>105,982,758</u>
2019թ. հունվարի 1-ի դրությամբ Բաժնետումսերի հետզնում Ըստամենը հաշվետու տարվա համապարփակ վնաս	54,966,680	(41,225,060)	(33,913,854)	(75,138,914)
2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ	<u>54,966,680</u>	<u>(41,225,060)</u>	<u>2,539,512</u>	<u>16,281,132</u>

**Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվություն****2019թ. դեկտեմբերի 31-ին ավարտված տարվա համար**

<b>Խազ. դրամ</b>	<b>Ծան.</b>	<b>2019թ.</b>	<b>2018թ.</b>
<b>Գործառնական գործունեություն</b>			
Իրացումից ստացված գումարներ, ներառյալ ԱԱՀ-ն		200,141,636	218,298,208
Վճարումներ մատակարարներին, ներառյալ ԱԱՀ-ն		(132,518,224)	(124,965,235)
Վճարումներ աշխատակիցներին՝ եկամուային հարկից գուտ		(26,281,337)	(20,463,853)
Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքների մարմարից ելքեր		107,310	(4,563,573)
Վճարումներ շահույթահարկի գծով*		(8,961,639)	(15,690,502)
Վճարումներ հարկերի գծով՝ բացառությամբ շահույթահարկի		(9,847,656)	(5,240,781)
Վճարումներ ողալթիքի գծով		—	(12,970,001)
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին		(6,267,475)	(5,433,720)
Վճարված տոկոսներ ստոցված ոչ ընթացիկ կանխավճարների գծով		(708,431)	(2,434,340)
Բանկային ծառայությունների վճարներ և վնասներ փոխարկումից		(158,882)	(1,214,734)
Այլ ստացված գումարներ		4,161,804	1,859,844
Այլ վճարումներ		(6,432,088)	(3,156,122)
<b>Զուտ դրամական միջոցների հոսքեր գործառնական գործունեությունից</b>		<b>13,235,018</b>	<b>24,025,191</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ներդրումային գործունեությունից</b>			
Հիմնական միջոցների և մակարացման գործունեության ակտիվի գծով ծախսումներ		(21,379,759)	(18,654,085)
Սուտքեր հիմնական միջոցների օտարումից		531,263	1,599
Տրված փոխառություններ		(8,451,441)	(797,326)
Տրված փոխառությունների մարում		8,090,006	—
Ստացված տոկոսներ		33,851	48,985
Ստացված շահաբաժններ Արցախ ՀԷԿ-ում բաժնետոմսերից Զուտ դրամական միջոցների հոսքեր օգտագործված ներդրումային գործունեությունում		172,373	117,115
		<b>(21,003,707)</b>	<b>(19,283,712)</b>
<b>Դրամական միջոցների հոսքեր ֆինանսավորման գործունեությունից</b>			
Սուտքեր վարկերից և փոխառություններից	31Դ	224,302,342	212,025,762
Վարկերի և փոխառությունների մարում	31Դ	(199,771,716)	(215,820,449)
Հետզնված բաժնետոմսերի վճարում		(31,047,068)	—
Սուտքեր բռղպրկված պարտառումներից		26,368,872	—
Վարձակալության պարավորության մայր գումարի մարում	29	(961,063)	—
Վարձակալության պարտավորության դիմաց վճարված տոկոս		(307,601)	—
Վճարված տոկոս, ներառյալ ոչ ռեզյենտի շահույթահարկը		(5,392,876)	(5,523,837)
Զուտ դրամական միջոցների հոսքեր ստացված/(օգտագործված) ֆինանսավագան գործունեությունից		<b>13,190,890</b>	<b>(9,318,524)</b>
<b>Դրամական միջոցների և դրանց համարժեքների գուտ աճ/(նվազում)</b>		<b>5,422,201</b>	<b>(4,577,045)</b>
Դրամական միջոցները և դրանց համարժեքները հունվարի 1-ի դրությամբ	22	525,227	5,678,570
Արտաքրույթի փոխարժեքի փոփոխությունների գուտ տարբերություններ		(484,447)	(576,298)
Դրամական միջոցները և դրանց համարժեքները դեկտեմբերի 31-ի դրությամբ (Ծան. 22)	22	<b>5,462,981</b>	<b>525,227</b>

## 1. Հիմնական գործունեության նկարագրություն

### ա) Տեղեկատվություն Խմբի վերաբերյալ

«Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ Խումբը («Խումբ») և իր դուստր ընկերություն՝ Լեռ-Էքս ՍՊ Ընկերություն («Շուտոր ընկերություն»), միասին կազմելով Խումբ («Խումբ») հանդիսանում են փակ բաժնետիրական Խումբ և սահմանափակ պատասխանատվությամբ Խումբ՝ Հայաստանի Հանրապետության Քաղաքացիական օրենսգրքի սահմանման համաձայն: Խումբը հիմնադրվել էր որպես պետական ձեռնարկություն 1952թ-ին: 2005թ. հունվարի 1-ին Խումբը սեփականաշնորհվեց կառավարության 2004թ. դեկտեմբերի 9-ի թիվ 1677-Ա որոշման համաձայն:

Խմբի հիմնական գործունեության փաստացի վայրը և իրավաբանական հասցեն է՝ Հայաստանի Հանրապետություն, Սյունիքի մարզ, Քաջարան, Լեռնագործների փող. 18:

Խմբի հիմնական գործունեությունը հանքարդյունաբերությունն է, պղնձի և մոլիբդենի խոտանյութի արտադրությունը: Պատրաստի արտադրանքը իրացվում է պղնձի և մոլիբդենի խոտանյութի, ֆերոմոլիբդենի տեսքով: Խմբի գործունեությունը կարգավորվում է Խմբի և ՀՀ Հներգետիկ Ենթակառուցվածքների և Բնական Պաշշարների նախարարության միջև կնքված Լիցենզիայի պայմանագրերով («Լիցենզիայի պայմանագրեր»): Լիցենզիայի պայմանագրերի համաձայն Խմբի գործունեությունը լիցենզավորված է մինչև 2041թ.:

2019 թվականին խումբը հետ գնեց իր արժեթղթեր, որի սեփականատերերներն հանդիսանում «Քրոնիմետ Մայնինգ» Էլ-Զի-Ն (60%), «Մարուր երկարիզործարան» ԲԲԸ-ն (15%) (99.3% վերջնական սեփականատերն է հանդիսանում «Քրոնիմետ Հոլդինգ» ՍՊ Խումբը), «ԱՍՓ Հոլդինգ» ՍՊ Խումբը (12.5%) և «Զանգեզուր Մայնինգ» ՍՊ Խումբը (12.5%) («Բաժնետերեր»):

2018 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ Խումբը վերահսկվում էր Գյունտեր Պիլարսկու կողմից: Արժեթղթերի վերագնումից հետո, 2019 թվականիներում երեսից 31-ից հետո Ընկերությունը չունի վերջնական վերահսկող բաժնետեր:

Կապակցված կողմերի հետ գործարքների մանրամասները ներկայացված են Ծան. 34-ում:

### բ) Հայկական գործարար միջավայր

Հայաստանի Հանրապետությունը շարունակում է տնտեսական բարեփոխումները և իրավական, հարկային և օրենսդրական համակարգերի զարգացումը: Հայաստանի տնտեսության ապագան կայունությունը մեծապես կախված է այս բարեփոխումներից և զարգացումներից, ինչպես նաև կառավարության կողմից ձեռնարկվող տնտեսական, ֆինանսական և դրամավարկային քաղաքականությունների արդյունավետությունից:

Ղեկավարությունը գտնում է, որ համապատասխան քայլեր է ձեռնարկում ներկայիս իրավիճակում Խմբի գործունեության կայունությունը ապագան ապահովելու համար:

Կոռոնավիրուսի վերջին բռնկումը, որը տարածվում է լինել մահաբեր վիրուսի տեսքով, կարող է բացասաբար անդրադառնալ տարածաշրջանային և ամբողջ աշխարհում տնտեսական պայմանների վրա, խափանել վարակը ներթափանցած երկրներում տեղակայված կազմակերպությունների աշխատանքները և ազդել պահանջարկի և առաջարկի գծարար շղթաների վրա կամ այլ կերպ ասած ազդել Խմբի բիզնեսի վրա:

Սեր աշխատակիցների և գործընկերների առողջությունն ու անվտանգությունը գերակա առաջնահերթություններ են մեր Խմբի համար, և հատևաքար մեր ղեկավարությունը միջազներ ձեռնարկեց առողջության հետ կապված ոլոկերը նվազագույնի հասցեներու ուղղությամբ: Կոռոնավիրուսի բռնկման ազդեցությունը Խմբի բիզնեսի վրա դեռ հստակ չէ, և հետևաքար դնելավարությունը ուշադիր հետևում է իրավիճակին:

## 2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները

### ա) Ընդհանուր մաս

Խմբի սույն համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստվել են Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտների խորհրդի (ՀՀՄՄԸ) կողմից թողարկված Ֆինանսական հաշվետվությունների միջազգային ստանդարտների (այսուհետ՝ «ՖՀՄՄ») պահանջների համաձայն:

**2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)**

**ա) Ըստհանուր մաս (շարունակություն)**

Նամախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստված են սկզբնական արժեքի հիմունքով՝ բացառությամբ ստորև ներկայացված հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ բացահայտվածի՝ Օրինակ՝ ածանցյալ ֆինանսական գործիքները գնահատված են իրական արժեքով:

Նախորդ տարվա որոշակի գումարներ և բացահայտումներ են վերադասակարգվել են և ներկայացվել են ընթացիկ տարվա ներկայացմանը համահունչ: Այս վերադասակարգումները որևէ ազդեցություն չեն ունեցել ներկայացված հաշվետվության գործողությունների արդյունքների վրա:

**բ) Դուստր ընկերություններ**

Հետևյալ դուստր ընկերությունը ընդգրկված է նմի՛ համախմբված ֆինանսական հաշվետվություններում՝

Դուստր ընկերություն	Մեկանութեածին		Հիմնական գործունեության վայր	Գրանցման երկիր	Գործունեության ընույթը
	յուն/ձայնի իրավունք, %	Կապան, Հայաստան			
«Լեռ-Էրս» ՍՊԸ	100%	Կապան, Հայաստան	Հայաստանի Հանրապետություն	Հանրապարքունակերպություն	Հանրապարքունակերպություն

**գ) Իրացվելիության դիրք**

2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ նմի՛ ընթացիկ պարտավորությունները գերազանցում են ընթացիկ ակտիվները 79,307,400 հազար ՀՀ դրամով (2018: 49,601,676 հազար ՀՀ դրամ):

Ղեկավարությունը ուսումնասիրել է նմի՛ պլանավորված դրամական հոսքերը և կիրառված համապատասխան ենթադրությունները՝ կատարելով համապատասխան սրբես թեստեր (կապված հիմնականում պղնձի պահանջարկի և գների հետ): Արդյունքում՝ Ղեկավարությունը ունի ողջամիտ կանխատեսում, որ Խումբն ունի բավարար միջոցներ իր գործառնական գործունեությունը տեսանելի ապագայում շարունակելու համար:

Խումբը ձեռք է բերել լրացուցիչ երկարաժամկետ ֆինանսավորում, և դեկավարությունը հավատացած է, որ հետագա ժամանաշրջաններում իրացվելիության անհավասարակշուրջյունը բարելավվելու է:

**դ) Ֆունկցիոնալ և ներկայացման արժույթ**

Հայաստանի Հանրապետության ազգային արժույթը ՀՀ դրամն է («դրամ»), որը հանդիսանում է նմի՛ Խումբների ֆունկցիոնալ արժույթը և այս համախմբված ֆինանսական հաշվետվությունների ներկայացման արժույթը:

Արտարժույթով կատարված գործարքները նմի՛ կողմից սկզբնապես գրանցվում են համապատասխան ֆունկցիոնալ արժույթի ափոր դրույթներով՝ այն օրվա դրությամբ, երբ գործարքն առաջին անգամ բավարարում է ճանաչման չափանիշներին: Արտարժույթով արտահայտված դրամային ակտիվներն ու պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի ափոր դրույթներով՝ կիրառելով հաշվետու ամսաթվի փոխարժեքը: Եռլր տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Ոչ դրամային հոդվածների համար, որոնք ներկայացվում են արտարժույթով արտահայտված սկզբնական արժեքով, վերաբնահատման ժամանակ կիրառվում է սկզբնական գործարքի ամսաթվի փոխարժեքը: Իրական արժեքով հաշվառվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները վերահաշվարկվում են կիրառելով իրական արժեքի դրաման օրվա փոխարժեքը:

Ֆինանսական ամբողջ տեղեկատվությունը ներկայացված է դրամով, եթե այլ բան նշված չէ: ՀՀ Կենտրոնական բանկի կողմից պաշտոնապես սահմանված փոխարժեքները 2019 և 2018թթ. դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել են համապատասխանաբար 479.7 ՀՀ դրամ և 483.75 ՀՀ դրամ 1 ԱՄՆ դրամի դիմաց և 537.26 ՀՀ դրամ և 553.65 ՀՀ դրամ 1 Եվրոյի դիմաց:

## 2. Հաշվետվությունների պատրաստման հիմունքները (շարունակություն)

### ե) Իրական արժեքի չափում

Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքականության մի շարք դրույթներ և բացահայտումներ պահանջվում են իրական արժեքի չափում ֆինանսական և ոչ ֆինանսական ակտիվների ու պարտավորությունների համար:

Ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելիս Խումբը հնարավորության սահմաններում օգտագործում է դիտարկելի շուկայական տվյալները:

Իրական արժեքները դասակարգվում են ըստ իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, իմբը ընդունելով գնահատման մեթոդներում օգտագործված ելակետային տվյալները, ինչպես ներկայացված է ստորև:

- ▶ 1-ին մակարդակ. համանման ակտիվների կամ պարտավորությունների համար ակտիվ շուկաներում գնանշվող գներ (չճշգրտված):
- ▶ 2-րդ մակարդակ. 1-ին մակարդակում ներառված գնանշվող գներից տարբեր այլ ելակետային տվյալներ, որոնք ակտիվի կամ պարտավորության գծով դիտարկվում են կամ ուղղակիրքն (այսինքն՝ որպես գներ) կամ անուղղակիրքն (այսինքն՝ գների հիման վրա ստացվող):
- ▶ 3-րդ մակարդակ. ակտիվի կամ պարտավորության գծով ելակետային տվյալներ, որոնք հիմնված չեն դիտարկելի շուկայական տվյալների վրա (ոչ դիտարկելի ելակետային տվյալներ):

Եթե ակտիվի կամ պարտավորության իրական արժեքը չափելու համար օգտագործվող ելակետային տվյալները կարող են դասակարգվել իրական արժեքի հիերարխիայի տարբեր մակարդակների, առաջ իրական արժեքը չափում ամբողջությամբ դասվում է հիերարխիայի այն նույն մակարդակին, որին դասվում են այն ամենացածր մակարդակի ելակետային տվյալները, որոնք նշանակալի են ամբողջությամբ վերցված իրական արժեքի չափման համար:

Լրացուցիչ տեղեկատվությունը իրական արժեքի գնահատման վերաբերյալ ներկայացված է Ծան. 31-ում:

## 3. Համախմբման հիմունքներ

Համախմբված ֆինանսական հաշվետվությունները բաղկացած են «Զանգեզուրի պղնձամոլիրդենային կոմբինատ» ՓԲԸ նկերության և իր դուստր ընկերության ֆինանսական հաշվետվություններից 2019թ.-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ: Դուստր ընկերությունը է համարվում այն ընկերությունը, որին նկատմամբ Խումբը վերահսկողություն է իրականացնում: Վերահսկողությունն իրականացվում է այն դեպքում, եթե Խումբը իրավունք ունի ներդրումներից ստանալ փոփոխական արդյունքներ կամ ներարկվում է այլ արդյունքների փոփոխությունների հետ կապված ոփսկին և կարող է ազդել այլ ներդրումներից ստացվող արդյունքների վրա իր իրավասությունների միջոցով: Մասնավորապես, Խումբը վերահսկում է ներդրումը, միայն և միայն այն դեպքում, եթե բավարարվում են հետևյալ պայմանները

- ▶ Խումբն ունի իրավասություն ներդրման օբյեկտի նկատմամբ (այսինքն՝ գոյություն ունեցող իրավունքներ), որոնք ապահովում են ներդրման օբյեկտի նշանակալի գործունեությունը կառավարելու հնարավորությունը,
- ▶ Խումբն ունի իրավունք ներդրումներից ստացվող փոփոխական արդյունքների նկատմամբ և ենթարկվում է այդ արդյունքների փոփոխությունների հետ կապված ոփսկին,
- ▶ Խումբն ունի հնարավորություն օգտագործելու իր իրավասությունները ներդրման օբյեկտի նկատմամբ՝ ներդրումներից փոփոխական արդյունքների վրա ազդելու նպատակով:

Որպես կանոն, ենթարկվում է, որ վերահսկողությունը պայմանավորված է ձայնի իրավունքի մեծամասնությամբ: Սույն ենթարկության հաստատման, ինչպես նաև Խմբի մոտ մեծամասնությունից ավելի քիչ քվեարկման կամ ներդրման օբյեկտի նկատմամբ մեծամասնությունից ավելի քիչ նմանատիպ իրավունքների առկաության դեպքում, Խումբը հաշվի է առնում և բոլոր փաստերը և հանգամանքները տվյալ ներդրման օբյեկտի նկատմամբ՝ իրավասության առկաությունը գնահատելու, ներառյալ

- ▶ ներդրման օբյեկտի նկատմամբ ձայնի իրավունք ունեցող անձանց հետ պայմանագրային համաձայնությունը,
- ▶ այլ համաձայնագրերից ծագող իրավունքները,
- ▶ Խմբին պատկանող առկա և հնարավոր քվեարկման իրավունքները:

### 3. Համախմբման հիմունքներ (շարունակություն)

Նշանակալի գործունեությունները այս գործունեություններն են, որոնք զգալիորեն ազդում են դրաստր ընկերության արդյունքների վրա: Դուստր ընկերության գործառնական և կապիտալ բյուջեները հաստատելու, ինչպես նաև առանցքային դեկազրա անձնակազմ նշանակելու որոշումների կարողությունը վկայում են այն մասին, որ Խումբը ունի դուստր ընկերության նշանակալի գործունեությունը կառավարելու իրավունք:

Խումբը կրկին գնահատում է ներդրման օբյեկտի նկատմամբ վերահսկողության առկայությունը, եթե փաստերը և հանգամանքները ցույց են տալիս, որ վերահսկողության երեք տարրերից մեկում կամ մի քանիտև կամ փոփոխությունները: Դուստր կազմակերպության համախմբումը սկսվում է, եթե Խումբը ձեռք է բերում վերահսկողություն դրաստր ընկերության նկատմամբ և դադարում է, եթե Խումբը կորցնում է այդ վերահսկողությունը: Դուստր ընկերության ակտիվները, պարտավորությունները, եկամուտները և ծախսերը ներառվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվության մեջ՝ սկսած Խմբի կողմից դրաստր ընկերության նկատմամբ վերահսկողության ձեռքբերման պահից մինչև այդ վերահսկողության դադարելը: Եթե Խմբի բաժնեմասը 100%-ից պակաս է, արտաքին բաժնետերին վերագրելի բաժնեմասը արտացոլվում է չվերահսկվող բաժնեմաս հոդվածում:

Շահույթը կամ վնասը և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների ցանկացած բաղադրիչ վերագրվում է Խմբի մայր ընկերության սեփականատերերին և չվերահսկվող բաժնեմասին, նույնիսկ եթե այն հանգեցնում է չվերահսկվող բաժնեմասերի մոտ բացասական մնացորդի: Անհրաժեշտության դեպքում, դրաստր ընկերությունների ֆինանսական հաշվետվությունները ճշգրտվում են՝ այդ Խումբների հաշվապահական հաշվառման բաղաքանատություններին համապատասխանեցնելու նպատակով: Ներխմբային բոլոր ակտիվները և պարտավորությունները, կայիտալը, եկամուտները, ծախսերը և դրամական հոսքերը, որոնք առաջացել են Խմբի ներսում գործառնությունների արդյունքում, համախմբելիս ամբողջությամբ բացառվում են:

Առանց վերահսկման կորստի դուստր ընկերությունում մասնակցության փոփոխությունը հաշվառվում է որպես սեփական կապիտալու փոփոխություն:

Եթե Խումբը կորցնում է դրաստր ընկերության նկատմամբ վերահսկողությունը, այն ապաձանաչում է դրաստր ընկերության ակտիվները (ներառյալ՝ գույղիլը), պարտավորությունները, չվերահսկվող բաժնեմասը և կապիտալի այլ բաղադրիչները, իսկ արդյունքում առաջացած օգուտը կամ վնասը ճանաչվում է ֆինանսական արդյունքներում: Պահպանված ցանկացած ներդրում ճանաչվում է իրական արժեքով:

### 4. Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

#### ա) Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառումը

Համախմբված ֆինանսական հաշվետվությունների պատրաստումը պահանջում է Խմբի դեկալարությունից կիրառել դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ, որոնք ազդեցություն ունեն եկամուտների ու ծախսերի, ակտիվների, պարտավորությունների և կից բացահայտումների վրա, ինչպես նաև պայմանական պարտավորությունների բացահայտումների վրա համախմբված ֆինանսական հաշվետվությունների ամսաթվի դրությամբ: Գնահատումները և ենթադրությունները շարունակաբար վերլուծվում են և հիմնված են դեկավարության փորձի և այլ գործոնների վրա, ներառյալ ապագա իրադարձությունների սպասումները, որոնք կարող են տեղի ունենալ որոշակի հանգամանքների պարագայում: Այս գնահատումների և ենթադրությունների վերաբերյալ անորոշությունը կարող է հանգեցնել այնպիսի հետևանքների, որոնք կպահանջեն հետազայռում ակտիվների ու պարտավորությունների հաշվեշուային արժեքների եական ճշգրտումներ:

Սասնավորապես, Խումբը հայտնաբերել է մի շարք ոլորտներ, որտեղ պահանջվում են նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ: Այս ոլորտների և նրանց՝ տարրեր հաշվապահական բաղաքանատությունների վրա ազդեցության վերաբերյալ հետազոտությունը նկարագրված է հաշվապահական բաղաքանատության հետ կապակցված ծանոթագրությունում՝ կապակցած որակական և բանակական ծանոթագրությունում, ինչպես նկարագրված է ստորև:

4. Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

ա) Դատողությունների, գնահատումների և ենթադրությունների կիրառումը (շարունակություն)

Այս ներառում է.

Դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

- ▶ Ծան. 16 Մակարացման գործունեության ակտիվ,
- ▶ Ծան. 2 (η) Ֆունկցիոնալ արժույթ,
- ▶ Ծան. 38 (գ) Եկամուտի ճանաչում,
- ▶ Ծան. 38 (ը) Շահութահարկ,
- ▶ Ծան. 38 (զ) Դիտարկում՝ պրինցիպալ թե գործակալ
- ▶ Ծան. 38 (η) Ընկերությունը որպես վարձակալ
- ▶ Ծան 11 Այլ ծախսեր՝ ոոյալթի գնահատում,
- ▶ Ծան. 3 (ը) Հանքարարի պաշարներ – օգտակար հանածոների պաշարների գնահատում, որոնք հիմք են հանդիսանում դրամական միջոցների ապագա հոսքերի գնահատման համար,
- ▶ Ծան. 38 (δ) Հետազոտման և գնահատման ծախսեր,
- ▶ Ծան. 38 (ի) Հիմնական միջոցներ – արտադրական միավորի մաշվածության հաշվարկի որոշում,
- ▶ Ծան. 38 (ի) Հիմնական միջոցներ – հիմնական միջոցների օգտակար ծառայության ժամկետ,
- ▶ Ծան. 26 (ա) Պահուստներ,
- ▶ Ծան. 38 (ա) Ակտիվների վերականգման կարողություն,
- ▶ Ծան. 38 (Ժ) Պաշարներ,
- ▶ Ծան. 38 Ֆինանսական գործիքներ և ռիսկերի կառավարում – ֆինանսական գործիքների իրական արժեք,
- ▶ Ծան. 38 Վաճառքի գնի գնահատված արժեք (առանձին)
- ▶ Ծան. 21 Առևտրային և այլ դեբիտորական պարտքերի արժեգրկում:

Ապագային վերաբերող առանցքային ենթադրությունները և այլ առանցքային աղբյուրների գնահատման անորոշությանն առնչվող ենթադրությունները հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ, որոնք պարունակում են ակտիվների և պարտավորությունների հաշվեկշռային արժեքի ճշգրտման նշանակալի ռիսկ, հաջորդ ֆինանսական տարրում, ներկայացված են ստորև կամ համապատասխան հաշվապահական քաղաքականության ծանոթագրությունում (հղումների համար տես վերոնշյալ ցուցակը):

Խոսմբը իր ենթադրությունները և գնահատումները կառուցել է հիմնվելով առանձին ֆինանսական հաշվետվությունների պատրաստման ժամանակ հասանելի չափանիշների վրա: Ներկա հանգամանքները և ենթադրությունները ապագա զարգացումների վերաբերյալ, այնուամենայնիվ կարող են փոխվել շուկայական փոփոխությունների հետ կապված կամ նմրի վերահսկողությունից դուրս գտնվող հանգամանքներից ելնելով: Այսպիսի փոփոխությունները, եթե տեղի են ունենալու, արտացոլվում են ենթադրություններում:

#### 4. Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ (շարունակություն)

##### Հանքարքի պաշարներ և շահագրծման լիցենզիա

Հանքարքի պաշարների և հանքային ռեսուրսները գնահատվել են այն չափով, որքանով հնարավոր է տնտեսապես և իրավական հիմունքներով արդյունահանումը նմրի հանքերից: Այսպիսի պաշարների և հանքային ռեսուրսների գնահատումները և փոփոխությունները կարող են ազդեցություն ունենալ նմրի երապարակված համախմբված ֆինանսական վիճակի և արդյունքների վրա հետևյալ կերպ:

- ▶ Ապագա դրամական հոսքերի գնահատման փոփոխությունը կարող է ազդել հիմնական միջոցների, մակարացման գործունեության ակտիվների և հետախուզման և գնահատման գործունեության ակտիվների հաշվեկշռային արժեքների վրա:
- ▶ Մաշվածությունը և ամրության կարող են փոփոխել համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, որտեղ այսպիսի ծախսերը որոշվում են թողարկված միավորի հիման վրա կամ որտեղ համապատասխան ակտիվների օգտակար ծառայության ժամկետներն են փոփոխվում:
- ▶ Մակարացման ծախսումները, որոնք՝ կապիտալացվել են ռոպես հիմնական միջոցների մաս կամ այլ ոչ ընթացիկ ակտիվների կամ պաշարների մաս ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում կամ ծախսագրվել են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, կարող են փոփոխել պայմանավորված մակարացման գործակիցների փոփոխությամբ:
- ▶ Տեղանքի վերականգնման կամ բնապահպանական պահուանները կարող են փոխվել, եթե պաշարների գնահատման փոփոխությունը ազդեցություն է ունենում այս գործողությունների սկզբու ժամանակի և ծախսերի մեծության վրա:
- ▶ Հետաձգված հարկային ակտիվների ճանաչումը և հաշվեկշռային արժեքը կարող է փոխվել՝ պայմանավորված այս ակտիվների գոյության վերաբերյալ դատողությունների և հավանական վերականգնումների վերաբերյալ գնահատումների փոփոխություններով:

Խումբը գործում է մինչև 2041թ-ը գործող լիցենզիայի ներքո՝ համաձայն համար PV-232 Լիցենզիայի պայմանագրի՝ կնքված 2012թ-ի նոյեմբերի 27-ին: Այս համախմբված ֆինանսական հաշվետվությունները պատրաստելիս դեկավարությունը առաջնորդվել է այս ենթադրությամբ, որ լիցենզիայի գործողության ժամկետը կերպարածվի 2041թ-ից ավել: Այս ենթադրությունը հիմնված է Ընդերքի մասին օրենսգրքի դրույթների վրա, որոնք նախատեսում են լիցենզիայի երկարածում՝ հիմնված ներկայացված դիմումի վրա:

Ի լրում՝ խումբը ստացել է JORC-ի համապատասխան հանքային ռեսուրսների գնահատման NI43-101 հաշվետվությունը՝ թողարկված Golder Associates-ի կողմից 2015թ-ի հոկտեմբերին:

Խումբը օգտագործում է վերոնշյալ գնահատումները տեղանքի վերականգնման ծախսերի ժամանակացույցի, հիմնական միջոցների, մակարացման գործունեության ակտիվի և հետախուզման և գնահատման գործունեության ակտիվների օգտակար ծառայության ժամկետների և արժեգրկման գնահատման համար:

#### 5. Տեղեկատվություն գործունեության ոլորտի վերաբերյալ

Խորի հիմնական գործունեությունը հանքարյունաբերությունն է, ինչպես նաև պղնձի և մոլիբդենի խտանյութի արտադրությունը: Խորի բոլոր ակտիվները գտնվում են, և գործունեությունն էլ իրականացվում է ՀՀ Սյունիքի մարզում: ՀՀ-ից դուրս Խումբը ոչ ընթացիկ ակտիվներ չունի: Կառավարման նպատակներով խումբը գործունեությունն իրականացնում է ստորաբաժանումների հիման վրա, որոնք ձևավորվել են գործունեության հիմնական տեսակներից ենելով, և ունի մեկ հաշվետու գործառնական միավոր:

- ▶ Այս գրադարձը է պղնձի և մոլիբդենի խտանյութի արդյունահանումամբ և վերամշակմամբ:

Խորհուրդը մշտադիտարկման է ենթարկում նմրի գործունեությունը՝ ռեսուրսների բաշխման և արդյունքների գնահատման վերաբերյալ որոշումներ կայացնելու նպատակով և հանդիսանում է նմրի հիմնական որոշումներ կայացնող մարմինը:

Հասուլիքն ըստ արտադրանքի և մատուցված ծառայության տեսակների ներկայացված է Ծան. 6-ում, իսկ վելուծությունն ըստ հաճախորդների կտեսնեք Ծան. 31-ում: Խումբությունը և ֆերոմոլիբդենի վաճառքից ստացված հասուլը կազմում է հաճախորդներից ստացված ընդհանուր հասուլի 98%-ը (2018: 97%):

## 6. Հասույթ

<i>հազ.դրամ</i>	<i>2019թ.</i>	<i>2018թ.</i>
Հասույթ պղնձի խտանյութի վաճառքից	123,909,829	134,067,520
Հասույթ ֆերոմոլիբդենի վաճառքից	66,157,603	60,090,531
Հասույթ պղնձի խտանյութի առարձման ծառայությունից	4,168,670	3,552,742
Հասույթ մոլիբդենի խտանյութի վաճառքից	1,486,907	-
Հասույթ մատուցված մակարացման ծառայությունից	-	2,086,000
Հասույթ այլ արտադրանքի վաճառքից	104,657	104,142
	<b>195,827,666</b>	<b>199,900,935</b>

2019թ-ի ընթացքում 21,199,155 հազար դրամի չափով պայմանագրի խօսման գումարը (Ծան. 30) տեղաբաշխվել է հաճախորդների հետ կնքած պայմանագրերից առաջացած հասույթ նվազեցնելով պղնձի խտանյութի վաճառքից առաջացած հասույթը (2018՝ գրություն):

Հասույթ պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի վաճառքից:

<i>հազ. դրամ</i>	<i>2019թ.</i>		<i>2018թ.</i>	
	<i>Չոր մետրիկ տոննա</i>	<i>հազ. դրամ</i>	<i>Չոր մետրիկ տոննա</i>	<i>հազ. դրամ</i>
Պղնձի խտանյութ	123,909,829	302,674	134,067,520	242,871
Ֆերոմոլիբդեն	66,157,603	8,851	60,090,531	6,980
Մոլիբդենի խտանյութ	1,486,907	383	-	-
	<b>191,554,339</b>		<b>194,158,051</b>	

Պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի վաճառքից եկամուտը ճանաչվում է ժամանակի այն պահին, երբ բոլոր ոփսկերը և իրավունքները փոխանցվում են (տես Ծան. 38), իսկ առաքումից եկամուտը ճանաչվում է ժամանակի այն պահին, երբ ծառայությունը փաստացի մատուցված է:

2019թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ խումբն ուներ 21,692,936 հազար դրամ գումարով պայմանականորեն գնանշվող վաճառք, որը բաղկացած էր 30,277 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութից, 513 չոր մետրիկ տոննա ֆերոմոլիբդենից և 104 չոր մետրիկ տոննա մոլիբդենի խտանյութից (2018թ-ին՝ 22,805,390 հազար դրամ՝ բաղկացած 18,561 չոր մետրիկ տոննա պղնձի խտանյութից և 893 չոր մետրիկ տոննա ֆերոմոլիբդենի խտանյութից), որի իրական արժեքը կազմում էր մոտավորապես 22,391,338 հազար դրամ (2018թ-ին՝ 22,336,268 հազար դրամ):

## 7. Վաճառքի ինքնարժեք

<i>հազ. դրամ</i>	<i>2019թ.</i>	<i>2018թ.</i>
Պղնձի խտանյութի և ֆերոմոլիբդենի վաճառքի ինքնարժեք	130,435,131	102,210,290
Մատուցված ծառայությունների ինքնարժեք	-	649,266
Այլ վաճառքների ինքնարժեք	537,285	227,739
Խումբը բացահայտել է երկու դրամատեղծ միավոր, որոնք ներկայացնում են նմրի երկու խումբները՝ Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ ՓԲ Խումբը և Լեռ-Էրս ՍՊ Խումբը:

**բ) Ֆինանսական գործիքներ – սկզբնական ճանաչում և հետագա չափում**

Ֆինանսական գործիքը պայմանագիր է, որը մի կազմակերպությունում առաջացնում է ֆինանսական ակտիվ, իսկ մուսում՝ ֆինանսական պարտավորություն կամ բաժնային գործիք:

**Ֆինանսական ակտիվներ**

**Սկզբնական ճանաչում և չափում**

Սկզբնական ճանաչման ժամանակ ֆինանսական ակտիվները դասակարգվում և հետագայում չափվում են ամորտիզացված արժեքով, իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով կամ իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Սկզբնական ճանաչման ժամանակ պարտքային գործիքներ հանդիսացող ֆինանսական ակտիվների դասակարգումը կախված է վերջիններիս պայմանագրային դրամական հոսքերի բնույթից և դրանք կառավարելու նմրի բիզնես մոդելից: Բացառությամբ առնտրային դեբիտորական պարտքերի, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար խումբն օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում, Խումբը սկզբնապես ֆինանսական ակտիվը չափում է իր իրական արժեքով՝ գումարած գործարքի հետ կապված ծախսումները, այն դեպքում, եթե ֆինանսական ակտիվը չի չափվում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Այն առնտրային դեբիտորական պարտքերը, որոնք չեն պարունակում էական ֆինանսավորման բաղադրիչ, կամ որոնց համար խումբը օգտագործել է կիրառելի նպատակահարմար մոտեցում և որոնք ունեն 1 տարի և պակաս ժամկետայնություն, չափում են ՅՀՍՍ 15-ով սահմանված գործարքի գնուլ:

Որպեսզի ֆինանսական ակտիվը դասակարգվի և չափվի ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով, անհրաժեշտ է, որ վերջինս առաջացնի դրամական հոսքեր, որոնք «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն» են (SPPI): Այս գնահատումը կոչվում է SPPI թեսու և կատարվում է գործիքի մակարդակված: Ֆինանսական ակտիվները, որոնց դրամական հոսքերը «բացառապես մայր գումարի և չմարված մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն» չեն, դասակարգվում և չափվում են իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով անկախ նմրի բիզնես մոդելից:

Ֆինանսական ակտիվների կառավարման նմրի բիզնես մոդելը ներկայացնում է, թե ինչպես է դրամական հոսքեր ձևավորելու նպատակով վերջինս կառավարում իր ֆինանսական ակտիվները: Բիզնես մոդելը սահմանում է, թե արյոք դրամական հոսքերը ձևավորվում են պայմանագրային դրամական հոսքերի հավաքագրումից, ֆինանսական ակտիվների վաճառքի վաճառքի կամ երկուսից միասնականական:

Ֆինանսական ակտիվների ձեռքբերումները կամ վաճառքները, որոնք պահանջում են ակտիվների մատակարարում շուկայում գործող կարգավորման միջոցով կամ գործարքը սովորությով (սովորական գործարքներում) սահմանված ժամկետի ընթացքում, ճանաչվում են գործարքի ամսաթվին, այսինքն՝ այն ամսաթվին, եթե խումբը ձեռք է բերել կամ վաճառել ակտիվը:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

թ) Ֆինանսական գործիքներ – սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

*Հետագա չափում*

Հետագա չափման նպատակներով ֆինանսական ակտիվները դասակարգվում են չորս դասերից մեկում.

- ▶ Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ),
- ▶ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները և կորուստները ապահանաչման ժամանակ վերադասակարգվում են (պարտքային գործիքներ),
- ▶ Իրական արժեքով՝ այլ համապարփակ ֆինանսական արդյունքների միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ, որոնց կուտակված օգուտները կամ կորուստները ապահանաչման ժամանակ չեն վերադասակարգվում (կապիտալի գործիքներ),
- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներ (պարտքային գործիքներ)

Խմբին առավել բնորոշ է ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների դասը. Խումբը ֆինանսական ակտիվները չափում է ամորտիզացված արժեքով, եթե բավարարում են ստորև թվարկված երկու պայմանները.

- ▶ Ֆինանսական ակտիվը պահպում է բիզնես մոդելի շրջանակներում, որի նպատակն է ֆինանսական ակտիվները պահելը պայմանագրային դրամական հոսքերը հավաքվելու նպատակով, և
- ▶ Ֆինանսական ակտիվի պայմանագրային պայմանները որոշակի ամսաթվերին առաջացնում են դրամական միջոցների հոսքը, որոնք միայն մայր գումարի և չմարդկան մայր գումարի վրա հաշվարկված տոկոսների վճարումներն են:

Ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվների հետագա չափումներն իրականացվում են՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը, և ենթակա են արժեգրկման գնահատման: Ստացված տոկոսները ճանաչվում են ֆինանսական եկամտի կազմում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում: Օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթում կամ վնասում, եթե ակտիվը ապահանաչվում է, ենթարկվում է փոփոխությունների կամ արժեգրկում է:

Խմբի ամորտիզացված արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվներում ներառվում են առևտրային և այլ դերիտորական պարտքերը (ոչ ենթակա պայմանական գնանշման), դրամական միջոցները և դրանց համարժեները և տրամադրված փոխառությունները:

**Իրական արժեքով հաշվառված շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվներ**

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները ներառում են առևտրային նպատակով պահպում ֆինանսական ակտիվները, օրինակ՝ ածանցյալ գործիքները, սկզբնական ճանաչման ժամանակ իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասակարգված ֆինանսական ակտիվները, օրինակ՝ պարտքային կամ բաժնային գործիքները կամ ֆինանսական ակտիվները, որոնք պետք է պարտադիր չափվեն իրական արժեքով, այսինքն՝ չեն անցել SPPI թեստը:

Ֆինանսական ակտիվները դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահպուղ առաջիկայում վաճառելու կամ հետզինան նպատակով: Ածանցյալ գործիքները, ներառյալ առանձնացված ներկառուցված ածանցյալ գործիքները, նույնպես դասակարգվում են որպես առևտրային նպատակով պահպուղ, եթե դրանք չեն դասակարգվել որպես հետապորման արդյունավետ գործիք: Ֆինանսական ակտիվները, որոնց դրամական միջոցների հոսքերը չեն անցնում SPPI թեստը, պետք է դասակարգվեն և չափվեն որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող՝ անկախ բիզնես մոդելից:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

Չնայած պարտքային գործիքների՝ ամորտիզացված արժեքով կամ իրական արժեքով հաշվառվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով չափվող դասակարգվելու չստանդարտներին, ինչպես վերևում նկարագրված է, պարտքային գործիքները կարող են նախատեսվել սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող, եթե այն վերացնում կամ եավես նվազեցնում է հաշվառման անհամապատասխանությունը:

Այդ դասը ներառում է ցուցակված բաժնային ներդրումները, որոնք նույնը առանց հետագա վերանայման չի որոշել դասակարգել որպես իրական արժեքով հաշվառվող այլ համապարփակ ֆինանսական արդյունքներով չափվող: Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող բաժնային ներդրումներից շահաբաժնները շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես այլ եկամուտներ, եթե վճարման իրավունքը հաստատվել է:

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում հաշվառվում են իրական արժեքով, իսկ իրական արժեքի գուտ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Համակցված պայմանագրում ներկառուցված ածանցյալ գործիքը ֆինանսական պարտավորության կամ ոչ ֆինանսական իմաստական պայմանագրի հետ միասին, առանձնացվում է հիմնական պայմանագրից և հաշվառվում է որպես առանձին ածանցյալ գործիք, եթե տնտեսական բնութագիրները և որոշ անթականորեն կապված չեն հիմնական պայմանագրի հետ, ներկառուցված ածանցյալ գործիքի նույն պայմաններով առանձնացված գործիքը կրավարքեր ածանցյալ գործիքի սահմանամը և համակցված պայմանագրով չի չափվում որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Ներկառուցված ածանցյալ գործիքները չափվում են իրական արժեքով, և իրական արժեքի փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում: Վերազնահատում տեղի է ունենում այն դեպքում, եթե պայմանագրի պայմանները փոփոխվում են, որը եականորեն ձևափոխում է դրամական միջոցների հոսքերը, որոնք հակառակ դեպքում կապահնջվեին, կամ ֆինանսական ակտիվը իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող դասակարգվում է:

Քանի որ ՖՀՄՍ 9-ը ֆինանսական ակտիվների համար նախատեսում է SPPI թեստ, ֆինանսական ակտիվների համար ներկառուցված ածանցյալ գործիքների առանձնացման այլև անհրաժեշտ չէ: Ներկառուցված ածանցյալ գործիքը սովորաբար հանգեցնում է նրան, որ ֆինանսական ակտիվը չի անցնում SPPI թեստը և, հետևաբար, պահանջվում է, որ գործիքը ամրողացնելով չափվի որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող: Սա կիրառելի է նմիր առևտրային դեբիտորական պարտքերի (պայմանական գնանշման ենթակա) համար: Այս դեբիտորական պարտքերը վերաբերում են վաճառքների պայմանագրերին, եթե վաճառքը գինը որոշվում է համարտորդին առարկում իրականացնելուց հետո հիմք ընդունելով պայմանագրով սահմանված համապատասխան գնորոշման ժամանակաշրջանի շուկայական գինը: Ապահնի գնի փոփոխությունների որոշ ենթական ենթարկվածությունը հանգեցնում է նրան, որ նման առևտրային դեբիտորական պարտքերը չեն անցնում SPPI թեստը: Արդյունքում, այս դեբիտորական պարտքերը չափվում են որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող համապատասխան վաճառքի ճանաչման ամսաթվից սկսած, և հետագա փոփոխությունները ճանաչվում են համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես հաստիքի վերաչափում:

**Ապահնաչում**

Ֆինանսական ակտիվը (կամ, կիրառելիության դեպքում, ֆինանսական ակտիվի մի մասը կամ միևնույն ֆինանսական ակտիվների խումբը) հիմնականում ապահնաչվում է (այսինքն հանվում է նմիր ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունները), եթե

- ▶ ակտիվից առաջացրող դրամական միջոցների հոսքերի նկատմամբ պայմանագրային իրավունքները կորցրել են իրենց ուժը, կամ
- ▶ նույնը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ, փոխանցման համաձայնագրի համաձայն, ստանձնել է ստացված դրամական միջոցների հոսքերը ամբողջությամբ երրորդ կողմին վճարելու պարտականություն առանց էական ուշացման, և ա) նույնը փոխանցել է, ըստ էության, ակտիվի բոլոր որոշ որոշումները, կամ բ) նույնը չի փոխանցել կամ պահպանել, ըստ էության, ակտիվի բոլոր որոշումները ու հաստուցները, բայց փոխանցել է ակտիվի հսկողությունը:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**բ) Ֆինանսական գործիքներ – սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)**

Եթե Խումբը փոխանցել է ակտիվից դրամական միջոցների հոսքերի ստացման իրավունքները կամ ձեռք է բերել փոխանցման համաձայնագիր, վերջինս պետք է գնահատի, թե ինչ չափով է պահպանել ակտիվի սեփականության հետ կապված ոփիկերն ու հատուցները: Եթե Խումբը ոչ փոխանցել է, ոչ պահպանել է ակտիվի, ըստ էության, բոլոր ոփիկերն ու հատուցները, ոչ էլ փոխանցել է ակտիվի հսկողությունը, ապա Խումբը շարունակում է ճանաչել փոխանցված ակտիվը իր շարունակվող ներգրավվածության չափով: Այս դեպքում, Խումբը նաև ճանաչում է դրա հետ կապված պարտավորությունը: Փոխանցված ակտիվը և դրա հետ կապված պարտավորությունը չափում են այն հիմքով, որը արտացոլում է նմուշի պահպանած իրավունքներն ու պարտականությունները:

Շարունակվող ներգրավվածությունը, որը ձեռք է բերում փոխանցված ակտիվի նկատմամբ երաշխիքի ձև, չափում է ակտիվի սկզբնական հաշվեկշռայի արժեքի և այն առավելագույն արժեքից նվազագույնով, որը նմուշից կարող է պահանջվել մարել:

**Ֆինանսական ակտիվների արժեքորոշում**

Ֆինանսական ակտիվների արժեքորոշման վերաբերյալ լրացուցիչ բացահայտումները ներկայացված են հետևյալ ծանոթագրություններում:

- ▶ Էական ենթադրությունների բացահայտում (Ծանոթագրություն 21),
- ▶ Առևտրային և այլ դեբիտորական պարտքեր (Ծանոթագրություն 21),
- ▶ Տրամադրված վարկեր (Ծանոթագրություն 19),

Խումբը ճանաչում է ակնկալվող վարկային կորուստների պահուստ բոլոր այն պարտքային գործիքների համար, որոնք չեն հաշվառվում և չափում իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով: Ակնկալվող վարկային կորուստների պահուստը հիմնված է պայմանագրի համաձայն պայմանագրային դրամական միջոցների հոսքերի և Խումբի կողմից ստացվելիք ակնկալվող դրամական հոսքերի տարրերության վրա՝ զեղչված մոտարկված սկզբնական արդյունավետ տոկոսադրույթով: Ակնկալվող դրամական միջոցների հոսքերը ներառում են գրավադրված միջոցների վաճառքից ստացվող դրամական միջոցների հոսքերը կամ պայմանագրային պայմանների մաս կազմող պարտքային դիրքի այլ ամրացումները:

Ակնկալվող վարկային կորուստների պահուստները ճանաչվում են երկու փուլով: Պարտքային դիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային դիսկեր սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն չի ավելացել, ակնկալվող վարկային կորուստների պահուստները ձեսվորվում են այն պարտքային կորուստների համար, որոնք առաջանում են հաջորդող 12 ամիսների ընթացքում դեֆուլտի հավանական դեպքերի արդյունքում (12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստներ): Պարտքային դիսկերի ենթարկվածության բոլոր տեսակների համար, որոնց պարտքային դիսկեր սկզբնական ճանաչումից ի վեր էականորեն ավելացել է, ակնկալվող վարկային կորուստների պահուստը պետք է ձեսվորել ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող պարտքային կորուստների համար անկախ դեֆուլտի տեղի ունենալու ժամկետից (ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստներ):

Առևտրային դեբիտորական պարտքերի (պայմանական գնանշմանը ոչ ենթակա) և այլ դեբիտորական պարտքերի համար, որոնք ժամկետանց են 12 ամսից ավելի քիչ, Խումբը կիրառում է ակնկալվող վարկային կորուստների հաշվարկման պարզեցված մոտեցումը, ինչպես թույլատրվում է ՖՀՍՄ 9-ով: Հետևաբար, Խումբը հետևում է պարտքային դիսկերի փոփոխություններին և ակնկալվող վարկային կորուստները հաշվարկում է Մուտիզի կողմից հրապարակված սեկտորների դեֆուլտի հավանականության հիմնա վրա:

Ամրությացված արժեքով պահպան այլ ֆինանսական ակտիվների համար (որոնք ժամկետանց են 12 ամսից ավել), ակնկալվող վարկային կորուստները հիմնված են 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստների վրա: 12-ամսյա ժամանակահատվածում ակնկալվող վարկային կորուստները մի մասն են կազմում, որը առաջանում է ֆինանսական գործիքի դեֆուլտի դեպքում, որը հավանական է, որ տեղի կունենա հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում: Սակայն, այն դեպքում, եթե ակտիվի սկզբնական ճանաչումից ի վեր առկա է պարտքային դիսկերի էական ավելացում, պահուստը պետք է հիմնված լինի ակտիվի ողջ ժամկետայնության ընթացքում ակնկալվող վարկային կորուստների վրա:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**բ) Ֆինանսական գործիքներ – սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)**

Սահմանելու համար, թե արդյոք ֆինանսական ակտիվի պարտքային ռիսկը սկզբնական ճանաչումից ի վեր էական ավելացել է, թե՝ ոչ, և ակնկալվող վարկային կորուստները գնահատելու համար Խումբը հաշվի է առնում ողջամիտ և հուսալի տեղեկատվությունը, որը համապատասխանում է և հասանելի է առանց ավելորդ ծախսի և շանքերի: Սա ներառում է ինչպես քանակական, այնպես էլ որակական տեղեկատվություն՝ վերլուծություն՝ հիմնված խմբի պատմական փորձի և պարտքերի գնահատման, ներառյալ՝ ապագային միտված տեղեկատվության վրա:

Խումբը ֆինանսական ակտիվը համարում է դեֆոլտ եղած, եթե դրա գծով պայմանագրային վճարումները 1 տարուց ավել ժամկետանց են: Այնուամենայնիվ, որոշակի դեպքերում, Խումբը կարող է ֆինանսական ակտիվը համարել դեֆոլտ եղած, եթե ներքին կամ արտաքին տեղեկատվությունը ցույց է տալիս, որ հավանական չէ, որ Խումբը մինչև Խումբի կողմից պահպող որևէ պարտքային դիրքի ամրապնդումը հաշվի առնելը ամրողությամբ կստանա պայմանագրային գումարը: Ֆինանսական ակտիվը դուրս է գրվում, եթե առկա չէ պայմանագրային դրամական միջոցների հոսքերի վերականգնման ողջամիտ ակնկալիք, և սովորաբար տեղի է ունենում այն դեպքում, եթե 1 տարուց ավել ժամկետանց է և ենթակա չէ հարկադրված գործողության:

Ցուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանում Խումբը գնահատում է, թե արդյոք ամորտիզացված արժեքով պահպող ֆինանսական ակտիվները արժեզրկված են, թե՝ ոչ: Ֆինանսական ակտիվը արժեզրկված է, եթե տեղի են ունեցել մեկ կամ ավելի դեպքեր, որոնք ունեցել են բացասական ազդեցություն ֆինանսական ակտիվի գնահատված ապագա դրամական հոսքերի վրա: Ֆինանսական ակտիվների արժեզրկման գնահատման վերաբերյալ լրացուցիչ քննարկումները ներկայացված են Ծանոթագրություն 31-ում և Ծանոթագրություն 21-ում:

**Ֆինանսական պարտավորություններ**

**Սկզբնական ճանաչում և չափում**

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ, վարկեր և փոխառություններ, կրեդիտորական պարտքեր, կամ անհրաժեշտության դեպքում ածանցյալ գործիքներ նախատեսված որպես արդյունավետ հեջափորման գործիքներ: Բոլոր ֆինանսական պարտավորությունները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով, իսկ վարկերի ու փոխառությունների և կրեդիտորական պարտքերի դեպքում գործարքի հետ կապված ուղղակիորեն վերաբերյալ ծախսումները գուտացված:

**Հետագա չափումը**

Ֆինանսական պարտավորությունների չափումը կախված է դրանց դասակարգումից, ինչպես նկարագրված է ստորև:

**Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորություններ**

Իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական պարտավորությունները ներառում են վաճառքի համար պահպող ֆինանսական պարտավորությունները և սկզբնական ճանաչման ժամանակ որպես իրական արժեքով հաշվառվող շահույթի կամ վնասի միջոցով չափվող նախատեսված ֆինանսական պարտավորություններ:

Ֆինանսական պարտավորությունները դասակարգվում են որպես վաճառքի համար պահպող, եթե դրանք ձևավորվել են առաջիկայում հետզնման նպատակով: Այս դասը ներառում է նաև Խումբի ածանցյալ ֆինանսական գործիքները, որոնք հեջափորման գործարքներում նախատեսված չեն որպես հեջափորման գործիքներ, ինչպես սահմանված է ՖՀՄՍ 9-ում: Առանձնացված ներկառուցված ածանցյալ գործիքները նույնպես դասակարգվում են որպես վաճառքի համար պահպող, եթե դրանք նախատեսված չեն որպես արդյունավետ հեջափորման գործիքներ: Վաճառքի համար պահպող ֆինանսական պարտավորությունների օգուտներն ու կորուստները ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

թ) Ֆինանսական գործիքներ – սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)

Վարկեր և փոխառություններ, թողարկված պարտատոմսեր ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքեր

Սկզբնական ճանաչումից հետո, տոկոսակիր վարկերն ու փոխառություններն ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքերը հետագայում չափում են ամորտիզացված արժեքով՝ կիրառելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը: Օգուտներն ու կորուստները ճանաչում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, երբ պարտավորությունները պահանաջում են, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույթի ամորտիզացիայի գործընթացի միջոցով:

Ամորտիզացված արժեքը հաշվարկվում է՝ հաշվի առնելով ձեռքբերման ժամանակ ցանկացած գեղչ կամ հավելավճար, ինչպես նաև արդյունավետ տոկոսադրույթի անբաժանելի մաս հանդիսացող վճարները կամ ծախսերը: Արդյունավետ տոկոսադրույթի ամորտիզացիան ներառվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Այս դասը հիմնականում կիրառվում է տոկոսակիր վարկերի և փոխառությունների ու առևտրային և այլ կրեդիտորական պարտքերի դեպքում: Լրացուցիչ տեղեկությունների համար տե՛ս և Ծանոթագրություն 25-ը և Ծանոթագրություն 28-ը:

**Ապամանաշում**

Ֆինանսական պարտավորությունը ապամանաշում է, եթե դրա հետ կապված պարտականությունը կատարվում է կամ չեղյալ է համարվում կամ ուժը կորցրած է ճանաչվում: Եթե գոյություն ունեցող ֆինանսական պարտավորությունը փոխարինվում է միևնույն փոխառուի՝ կականորեն տարբեր պայմաններով մեկ այլ պարտավորությամբ, կամ գոյություն ունեցող պարտավորության պայմանները կականորեն ձևափոխվում են, ապա այդպիսի փոխարինումը կամ ձևափոխումը դիտվում է որպես սկզբնական պարտավորության ապամանաշում և նոր պարտավորության ճանաչում: Համապատասխան հաշվեկշռային արժեքների տարբերությունը ճանաչում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մեջ:

**Ֆինանսական գործիքների հաշվանցումը**

Ֆինանսական ակտիվներն ու ֆինանսական պարտավորությունները հաշվանցվում են, և գուտ գումարը ներկայացվում է ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում, եթե առկա է ճանաչված գումարների հաշվանցման ներկայում իրավործելի իրավաբանորեն ամրագրված իրավունք, ինչպես նաև հաշվարկը գուտ հիմունքով իրականացնելու կամ միաժամանակ ակտիվներն իրացնելու և պարտավորությունները մարելու մուադրություն:

**Դրամական միջոցներ և դրանց համարժեքներ**

Դրամական միջոցները և դրանց համարժեքները ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ներառում են դրամական միջոցները բանկերում և դրամարկդում, ինչպես նաև կարճաժամկետ ավանդները, որոնց մարման ժամկետը սկզբնապես երեք ամսից պակաս է, բայց բացառում է ցանկացած սահմանափակված դրամական միջոցները: Սահմանափակված դրամական միջոցները հասանելի չեն նույնի կողմից օգտագործման համար և, հետևաբար, չեն համարվում բարձր իրացվելի օրինակ՝ տեղանքի վերականգնման պարտավորությունների համար առանձնացված դրամական միջոցները:

Դրամական միջոցների հոսքերի մասին համախմբված հաշվետվության պատրաստման նպատակով դրամական միջոցները և դրանց համարժեքները ներառում են վերոնշյալ սահմանմամբ դրամական միջոցները և դրանց համարժեքները:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**բ) Ֆինանսական գործիքներ – սկզբնական ճանաչում և հետագա չափում (շարունակություն)**

**Ածանցյալ ֆինանսական գործիքներ**

Խումբն օգտագործում է ածանցյալ ֆինանսական գործիքները, ինչպիսիք են ապրանքային ֆորվարդ պայմանագրերը ապրանքի գնի որևէ կրթավորելու նպատակով: Այդպիսի ածանցյալ ֆինանսական գործիքները սկզբնապես ճանաչվում են իրական արժեքով այն օրը, որ օրը ածանցյալ գործիքի պայմանագիր կնքվել է, և հետագայում վերաչափում են իրական արժեքով: Ածանցյալ գործիքները հաշվառվում են որպես ֆինանսական ակտիվներ, եթե իրական արժեքը դրական է, և որպես ֆինանսական պարտավորություններ, եթե իրական արժեքը բացասական է: Ցանկացած օգուտ կամ վնաս, որն առաջանում է ածանցյալ գործիքների իրական արժեքի փոփոխություններից, ուղղակիորեն տարվում են շահուցիք կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվություն:

**գ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ**

Խումբը հիմնականում զրադրում է պղնձի/մոլիբդենի խուայութի արտադրության բիզնեսով և որոշակի հանգամանքներում մատուցում է բեռնափոխադրումների/առարման ծառայություններ: Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթը ճանաչվում է, եթե ապրանքների և ծառայությունների հսկողությունը փոխանցվում է հաճախորդներին այն փոխառուցման գումարի չափով, որի նկատմամբ Խումբն ակնկարում է սուանալ իրավունք հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց:

**Պայմանագրային մսացորդներ**

**Պայմանագրային ակտիվներ**

Պայմանագրային ակտիվը հաճախորդին ապրանքներ և ծառայություններ փոխանցելու դիմաց ստացված փոխառուցման նկատմամբ իրավունքն է: Եթե Խումբն ապրանքների և ծառայությունների փոխանցումն իրականացնում է մինչև հաճախորդի կողմից փոխառուցման իրականացնելը կամ մինչև դրա՝ վճարման ենթակա դառնալը, պայմանագրային ակտիվը ճանաչվում է վաստակած փոխառուցման համար, որը պայմանական է: Խումբը չունի պայմանագրային ակտիվ, քանի որ կատարում ու փոխառուցման նկատմամբ իրավունքը ձեռքբերում տեղի է ունենալու կարծ ծամանակահատվածում և փոխառուցման նկատմամբ բոլոր իրավունքները ոչ պայմանական են:

**Առևտրային դերիտորական պարտքեր**

Դերիտորական պարտքը ներկայացնում է ոչ պայմանական փոխառուցման գումարի նկատմամբ նմբի իրավունքը (այսինքն՝ միայն ինչ-որ ժամանակահատված է պահանջվում մինչև փոխառուցման կդառնա վճարման ենթակա):

**Պայմանագրային պարտավորություններ**

Պայմանագրային պարտավորությունը հաճախորդին ապրանքների և ծառայությունների փոխանցման պարտականությունն է, որի դիմաց Խումբը հաճախորդից ստացել է փոխառուցման (կամ փոխառուցման գումարը ստացման ենթակա է): Եթե հաճախորդը վճարում է փոխառուցման մինչև նմբի կողմից ապրանքների կամ ծառայությունների փոխանցումը հաճախորդին, պայմանագրային պարտավորությունը ճանաչվում է, եթե վճարումն իրականացվում է կամ եթե վճարումն ստացման ենթակա է (որն ավելի շուտ է): Պայմանագրային պարտավորությունները ճանաչվում են որպես հասույթ, եթե Խումբն այն իրականացնում է պայմանագրի համաձայն:

Ժամանակ առ ժամանակ, Խումբը (CIP) միջազգային առևտրի պայմանների համաձայն իրականացված մետաղի խուայութի որոշ վաճառքների գծով ճանաչում է պայմանագրային պարտավորություններ, որի դեպքում դրամական միջոցների հոսքերի մի մասը հաճախորդից կարող է ստացվել մինչև բեռնափոխադրումների/առարման ծառայությունների մատուցումը: Պայմանագրային պարտավորությունների վերաբերյալ լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Սանոթագրություն 30-ը:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**գ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ (շարունակություն)**

**Պղնձի/մոլիբդենի խուանյութի (մետաղի խուանյութի) վաճառքները**

Խսմբի՝ մետաղի խուանյութի վաճառքների մեծամասնությունը հնարավորություն է տալիս գինը ճշգրտել՝ հիմք ընդունելով պայմանագրով սահմանված համապատասխան գնորոշման ժամանակաշրջանի վերջում շուկայական գինը: Սրանք կոչվում են պայմանական գնանշման պայմանագրեր և այնպիսին են, որ մետաղի խուանյութի վաճառքի գինը հիմնված է հաճախորդին առարումից հետո սահմանված որոշակի սպազմա ամսաթվին գերակշռող սինթ գների վրա: Վաճառքի գնի ճշգրտումներն իրականացվում են մինչև գնորոշման ժամանակաշրջանի վերջը շուկայական գների շարժերի հիման վրա: Պայմանական սպազմագրի և գնորոշման ժամանակաշրջանի վերջի միջև ժամանակահատվածը կարող է լինել մեկից երեք ամիս:

Հասույթը ճանաչվում է այն ժամանակ, երբ հսկողությունը անցնում է հաճախորդին, որը տեղի է ունենում այն ժամանակ, երբ մետաղի խուանյութը ֆիզիկապես տեղափոխվում է նաևի, գնացքի, փոխարողողի կամ առարման այլ մեխանիզմի վրա: Հասույթը չափվում է այն գումարի չափով, որի նկատմամբ նույնը ակնկալում է ստանալ իրավունք, որը իրենից ներկայացնում է գնորոշման ժամանակաշրջանի վերջում ակնկալվող ստացվելիք գնի գնահատումը, այսինքն՝ ֆորվարդի գինը, և ճանաչվում են համապատասխան առևտրային դեբիտորական պարտքերը: (CIP) առարման պայմաններին ենթակա պայմանագրերի համար, պայմանագրային գնի մի մասը բաշխվում է առանձին մատուցված բեռնափոխադրումներին/առարման ծառայություններին:

Այս պայմանական գնանշված պայմանագրերի համար, գնորոշման ժամանակաշրջանի ընթացքում տեղի ունեցած ցանկացած ապազա փոփոխություն պարունակվում է պայմանականորեն գնանշված առևտրային դեբիտորական պարտքերում և, հետևաբար, գումարով է ՖՀՄՍ 9-ի, և ոչ թե ՖՀՄՍ 15-ի շրջանակներում: Հաշվի առնելով ապահովների գների փոփոխությունների ոխկին ենթարկվածությունը՝ պայմանականորեն գնանշված այս առևտրային դեբիտորական պարտքերը ՖՀՄՍ 9-ի շրջանակներում չեն անցնում դրամական միջոցների հոսքերի բնութագրիչների թեսությունը, և սկզբնական ճանաչումից սկսած մինչև գործարքի կատարման ամսաթիվը պահանջվում է չափել որպես իրական արժեքով հաշվառվող կամ վնասի միջոցով չափվող:

Իրական արժեքի այս հետագա փոփոխությունները յուրաքանչյուր հաշվետվու ժամանակաշրջանում ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում և ներկայացվում են որպես հասույթի ճշգրտումներ: Գնորոշման ժամանակաշրջանի ընթացքում և դրա վերջում իրական արժեքի փոփոխությունները ցնահատվում են՝ հիմք ընդունելով ուսկը և պղնձի վերանայված ֆորվարդ շուկայական գները, ինչպես նաև հաշվի առնելով ՖՀՄՍ 13-ով սահմանված իրական արժեքի այլ համապատասխան նկատմամբ, ներառյալ տրկուադրությունը և պարտքային ոխկի ճշգրտումները:

**Բեռնափոխադրումների/առարման ծառայություններ**

Ինչպես վերևում նկարագրված է, Խսմբի մետաղի խուանյութերի վաճառքների մի մասը իրականացվում է (CIP) միջազգային առևտրի պայմանների համաձայն, որի դեպքում նմիշի կողմից հաճախորդներին մետաղի խուանյութը հակողությունը փոխանցելու ամսաթվից հետո նույնը պատասխանատվություն է կրում բեռնափոխադրումների/առարման ծառայությունների մատուցման համար (որպես պայմանագրի հիմնական կողմ): Հետևաբար, նույնը բեռնափոխադրումների/առարման ծառայությունների գծով ունի առանձին կատարման ենթակա պարտավորություն, որը իրականացվում է միայն արտադրված ապրանքների վաճառքը հեշտացնելու նպատակով:

Խսմբի կողմից սովորաբար օգտագործվող միջազգային առևտրի այլ պայմաններից են (CPT)-ն և (FCA)-ն, որտեղ խումբը պատասխանատվություն չի կրում բեռնափոխադրումների կամ ապահովագրության համարային պահից, երբ Երևանում բեռնման վայրում ապրանքների հսկողությունը փոխանցվում է, և «Հասցրած մինչև համաձայնեցված վայր»-ը (DAP), երբ ապրանքների հսկողությունը փոխանցվում է, երբ ապրանքը առարկում է համաձայնեցված վայր: Միջազգային առևտրի պայմաններին բավարարող այս պայմանագրերի դեպքում միակ կատարման ենթակա պարտավորությունները ապրանքների տրամադրումն է այն պահին, երբ հսկողությունը փոխանցվում է:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**գ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ (շարունակություն)**

(CIP) պայմանագրերի համար, պայմանագրային գինը (ինչպես վերևում նկարագրված է) բաշխվում է մետաղի խոսնութիւն և բեռնափոխադրումների/առարման ծառայությունների վրա՝ օգտագործելով առանձին վաճառքի զնի մեթոդը: Այս պայմանագրերի համաձայն, պայմանական ապրանքագրի համաձայն փոխհատուցման մի մասը կարող է ստացվել հաճախորդի կողմից կանխիկ առարման ամսաթվին կամ դրան մոտ ամսաթվին: Հետևաբար, բեռնափոխադրումներին/առարման ծառայություններին վերաբերող դեռևս չորամադրված որոշ կանխավճարային փոխհատուցումները հետաձգվում են: Դրանք հետագայում ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակ, երբ Խումբն իրականացնում է կատարման ենթակա պարտավորությունը: Այս բեռնափոխադրումների/առարման ծառայությունների հետ կապված ծախսերը նույնպես ճանաչվում են այն ժամանակ, երբ կատարման ենթակա պարտավորությունները կատարվում է Խոմի կողմից:

Բեռնափոխադրումների/առարման ծախսերի վճարումը կարող է առաջանալ մինչև ծառայությունների մատուցումը (և, հետևաբար, ճանաչվում է որպես պայմանագրային պարտավորություն): Վերջին մասը վճարվում է ծառայությունների մատուցման ավարտից հետո: Այս կանխավճարային գումարների ստացման և բեռնափոխադրումների/առարման ծառայությունների բավարարման միջև ժամանակահատվածը սովորաբար մինչև 4 ամիս է: Հաշվի առնելով այս գումարների չափը և կանխիկ դրամական միջոցների ստացման և կատարման ենթակա պարտավորության կատարման միջև կարծ ժամանակահատվածը խումը կիրառել է էական ֆինանսավորման բաղադրիչի ազդեցության համար խոստացված փոխհատուցումը չճշգրտելու կիրառելի նպատակահարմար մոտեցում, քանի որ հաճախորդին ապրանքների կամ ծառայությունների փոխանցման և հաճախորդի կողմից այդ ապրանքի կամ ծառայության դիմաց վճարման միջև ժամանակահատվածը մեկ տարի կամ պակաս է:

**Հիմնական կողմ և գործակալ հարաբերակցություն**

Խումբը, ընդհանուր առմամբ, եզրակացրել, որ հասույթի պայմանագրերի տեսանկյունից ինքը հանդիսանում է հիմնական կողմ, քանի որ սովորաբար վերահսկում է ապրանքներն ու ծառայությունները մինչև դրանք հաճախորդին փոխանցելը:

(CIP) միջազգային առևտորի պայմաններին սուբյեկտ հանդիսացող որոշ պայմանավորվածություններում խումբը պատասխանատու է բեռնափոխադրման/առարման ծառայություններ մատուցելու համար: Թեպես խումբը իրականում չի տրամադրում կամ գործարկում նավեր, բեռնատար մեքենաներ կամ գնացքներ, խումբը սահմանել է, որ այս պայմանավորվածություններում ինքը հանդիսանում է հիմնական կողմ, քանի որ եզրակացրել է, որ ինքը վերահսկում է նշված ծառայությունները մինչև դրանք հաճախորդին մատուցելը: Սրա հիմքում ընկած է այն, որ խումը ձեռոր է գերում է բեռնափոխադրման/առարման ծառայություններ մատուցելու իրավունքի վերահսկողությունը հաճախորդի հետ պայմանագրային հարաբերությունների մեջ մտնելուց հետո, քայլ մինչև նրան այդ ծառայությունները մատուցելը: Խոմի՝ ծառայությունները մատուցողի հետ պայմանագրի պայմանները Խոմին հենարավորություն են տալիս ուղղորդելու նրան՝ նշված ծառայությունները Խոմի անունից մատուցելու:

Բացի դրանից, Խումը եզրակացրել է, որ հետևյալ հայտանիշները վկայում են, որ ինքը վերահսկում է բեռնափոխադրման/առարման ծառայությունները մինչև դրանք հաճախորդին մատուցելը:

- ▶ Խումը զիյավորապես պատասխանատու է բեռնափոխադրման/առարման ծառայություններ մատուցելու խոստման կատարման համար: Թեպես խումը հաճախորդին խոստացված ծառայությունները մատուցելու համար վարձել է ծառայություններ մատուցողի, խումը ինքն ինքն է պատասխանատու ծառայությունների մատուցումը և դրանց՝ հաճախորդի կողմից ընդունելի լինելը ապահովելու համար (այսինքն Խումը պատասխանատու է պայմանագրի խոստման կատարման համար, անկախ այն հանգամանքից, թե խումը ինքն է մատուցում ծառայությունները, թե ծառայությունները մատուցելու համար ներգրավում է երրորդ կողմ հանդիսացող ծառայությունների մատուցողի):
- ▶ Հաճախորդին մատուցվող ծառայությունների գինը խումը որոշում է իր հայեցողությամբ, քանի որ այն բանակցվում է ուղղակիորեն հաճախորդի հետ:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(Չարունակություն)**

**գ) Հաճախորդների հետ պայմանագրերից հասույթ (Չարունակություն)**

*Բնունափոխադրումներին/առաքման ծառայությունների կատարման ժամկետի որոշումը*

Խումբը եզրակացրել է, որ բեռնափոխադրման/առաքման ծառայություններից հասույթը պիտի ճանաչվի ժամանակի ընթացքում, քանի որ հաճախորդը միաժամանակ ստանում և սպառում է խմբի կողմից տրամադրված օգուտները: Այն փաստը, որ այլ կազմակերպության կողմից կարիք չի եղել նորից կատարել խմբի կողմից մինչ այս մատուցված բեռնափոխադրման/առաքման ծառայությունները, ցույց է տալիս, որ հաճախորդը միաժամանակ ստանում և սպառում է խմբի գործունեությունից օգուտները այն պահին, եթե դրանք իրականացվում են: Խումբը որոշել է, որ բեռնափոխադրման/առաքման ծառայությունների առաջընթացը չափելու համար լավագույն մեթոդը ելակետային տվյալների մեթոդն է, քանի որ այսուեւ խմբի շանքերի (այսինքն անցած ժամանակի) և հաճախորդին ծառայության փոխանցման միջև կա ուղղի կապ: Խումբը հասույթը ճանաչում է ծառայությունն ավարտելու համար ակնկալվող ընդհանուր ժամանակահատվածի հարաբերությամբ անցած ժամանակի հիման վրա:

*Մակարացման գործունեության ծառայություններ*

Խումբը հաճախորդներին մատուցում է նաև մակարացման գործունեության ծառայություններ: Խումբը այս ծառայություններից հասույթը ճանաչում է ժամանակի այն պահին, եթե հաճախորդը իր գտնվելու վայրում ստանում է տրամադրված օգուտները: Խումբը որոշում է, թե արդյոք պայմանագրում կան այլ խոստումներ, որոնք ներկայացնում են առանձին կատարման ենթակա պարտավորություն, որոնց վրա պայմանագրային գնի մի մասը պետք է բաշխվի:

**դ) Նվիրատվություն սոցիալական ծրագրերին**

Այն չափով որքանու սոցիալական ծրագրերին խմբի հատկացումները ծառայում են հանրության շահերին և չեն սահմանափակվում նմերի աշխատակիցներով, դրանք ճանաչվում են առաջանալուն պես որպես նվիրատվություններ սոցիալական ծրագրերին շահույթի կամ վնասի կազմում:

**ե) Ֆինանսական եկամուտ և ծախս**

Խմբի ֆինանսական եկամուտը և ֆինանսական ծախսը ընդգրկում են:

- ▶ Տոկոսային եկամուտ;
- ▶ Տոկոսային ծախս;
- ▶ Տեղանքի վերականգնման պահուստի և արձակման նպաստների պահուստի գծով գեղշի ծախսագրում;
- ▶ Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից գուտ օգուտ/վնաս:

Տոկոսային եկամուտը կամ ծախսը ճանաչվում է՝ օգուտագործելով արդյունավետ տոկոսադրույթի մեթոդը:

Իրական արժեքով՝ շահույթի կամ վնասի միջոցով չափվող ֆինանսական գործիքներից գուտ օգուտ/վնասը ճանաչվում է իրացված միայն կանխիկ մարման դեպքում:

**գ) Արտարժույթ**

**Արտարժույթի փոխարկում**

Արտարժույթը գործարքները սկզբնապես ճանաչվում են ֆունկցիոնալ արժույթով, փոխարկվում են կիրառելով գործարքի օրվա դրությամբ գործող փոխարժեքը: Հաշվետու ամսաթիվ դրությամբ արտարժույթով արտահայտված դրամային ակտիվները և պարտավորությունները փոխարկվում են ֆունկցիոնալ արժույթի այդ օրվա դրությամբ սահմանված փոխարժեքով: Դրամային հոդվածների փոխարժեքային տարբերություններից օգուտը կամ վնասը իրենից ներկայացնում է հաշվետու տարվա սկզբի դրությամբ ֆունկցիոնալ արժույթով արտահայտված, արդյունավետ տոկոսադրույթով և ժամանակաշրջանի ընթացքում վճարումներով չշգրտված ամորտիզացված արժեքի, և արտարժույթով արտահայտված ու հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվա դրությամբ գործող փոխարժեքով փոխարկված ամորտիզացված արժեքի տարբերությունը:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(Հարունակություն)**

**գ) Արտարժույթ (Հարունակություն)**

Պատմական արժեքով չափվող արտարժույթով արտահայտված ոչ դրամային հոդվածները փոխարկվում են գործարքի օրվա դրույթամբ սահմանված փոխարժեքով: Արտարժույթի փոխարկումից առաջացող տարբերությունները ճանաչվում են շահույթի կամ վնասի կազմում:

**հ) Աշխատակիցների հատուցումներ**

Աշխատակիցների կարգաժամկետ հատուցումների գծով պարտականությունները չափվում են առանց գեղշման և ծախսագրվում են համապատասխան ծառայությունը մատուցելուց հետո: Պարտավորությունը ճանաչվում է այն գումարի չափով, որն ակնկալվում է վճարել որպես կարգաժամկետ դրամական միջոցների տեսքով պարզեալար, եթե նույնի ունի ներկա իրավական կամ կառուցողական պարտականություն այդ գումարը վճարելու որպես աշխատողի կողմից մատուցված անցյալ ծառայության արդյունք և կարող է արժանահավատորեն գնահատել պարտականությունը:

**ի) Աշխատակիցների արձակման նպաստներ**

Աշխատակիցների արձակման նպաստները ծախսագրվում են, եթե նույն այլևս չի կարող չեղյալ համարել նշված նպաստների առաջարկը: Եթե արձակման նպաստների ամրողական վճարումը չի ակնկալվում հաշվետու ժամանակաշրջանի ավարտին հաշորդող 12 ամսվա ընթացքում, ապա արձակման նպաստները գեղշվում են:

**լ) Շահութակարկ**

Շահութակարկը բաղկացած է ընթացիկ և հետաձգված հարկերից: Ընթացիկ և հետաձգված հարկերը ճանաչվում են շահույթում կամ վնասում, բացառությամբ այն մսակի, որը վերաբերում է ուղղակիորեն սեփական կապիտալում կամ այլ համապարփակ ֆինանսական արդյունքում ճանաչված տարրերին:

**լլ) Ընթացիկ շահութակարկ**

Ընթացիկ և նախորդ ժամանակաշրջանի շահութակարկի ընթացիկ հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն գումարով, որն ակնկալվում է ստանալ հարկային մարմիններից կամ վճարել հարկային մարմիններին: Տարկերի դրույքների և հարկերի գումարների հաշվարկման համար օգտագործվող օրենքներն այն օրենքներն են, որոնք կիրառվել կամ սահմանվել են հաշվետու ամսաթվի դրույթամբ այն երկրներում, որտեղ նույնը գործում և առաջացնում է հարկվող շահույթ:

Ընթացիկ շահութակարկը, որը վերաբերում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ սեփական կապիտալում ուղղակիորեն ճանաչված հոդվածներին, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ սեփական կապիտալում, և ոչ թե շահույթում կամ վնասում: Նեկապարությունը ժամանակ առ ժամանակ գնահատում է հարկերի փոխհատուցումների դիրքերը, ըստ այն իրավիճակների, որտեղ կիրառվող հարկային կարգավորումները հանդիսանում են մենաբանությունների առարկա, և անհրաժեշտության դեպքում սահմանում է պահուստներ:

**լլլ) Հետաձգված հարկ**

Հետաձգված հարկը ճանաչվում է հաշվեկշռային մեթոդով հաշվետու ամսաթվի դրույթամբ ակտիվների և պարտավորությունների հարկային բազաների և դրանց ֆինանսական հաշվետվություններում արտացոլված հաշվեկշռային արժեքների ժամանակավոր տարբերությունների հիման վրա:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**թ) Շահութահարկ (շարունակություն)**

Հետաձգված հարկային պարտավորությունները ճանաչվում են բոլոր հարկվող ժամանակավոր տարրերությունների համար, բացառությամբ

- ▶ Երբ հետաձգված հարկային պարտավորությունը առաջանում է գուղվիլի կամ ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի/վնասի, ոչ էլ հարկվող շահույթի/վնասի վրա,
- ▶ Համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցացված կազմակերպություններում ներդրումների հետ կապված հարկվող ժամանակավոր տարրերությունների դեպքում, որտեղ ժամանակավոր տարրերությունների հակադարձան ժամանակահատվածը կարող է վերահսկվել մայր կազմակերպության, ներդրողի կամ վենչուրային ներդրողի կողմից, և հավանական է, որ ժամանակավոր տարրերությունները չեն հակադարձի տեսանելի ապագայում:

Հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են բոլոր նվազեցվող ժամանակավոր տարրերությունների, տեղափոխված չօգտագործված հարկային գեղշերի և չօգտագործված հարկային վնասների համար այնքանով, որքանով հավանական է, որ կինի հարկվող շահույթը, որի դիմաց այդ նվազեցվող ժամանակավոր տարրերությունները, տեղափոխված չօգտագործված հարկային գեղշերը և վնասները հնարավոր կինի օգտագործել՝ բացառությամբ հետևյալ դեպքերի՝

- ▶ Երբ նվազեցվող ժամանակավոր տարրերություններին վերաբերող հետաձգված հարկային ակտիվը առաջանում է ձեռնարկատիրական գործունեության միավորում չհանդիսացող գործարքներում ակտիվների կամ պարտավորությունների սկզբնական ճանաչումից, որը գործարքի պահին չի ազդում ոչ հաշվապահական շահույթի/վնասի, ոչ էլ հարկվող շահույթի/վնասի վրա,
- ▶ Համատեղ ձեռնարկումներում, դուստր և ասոցացված կազմակերպություններում ներդրումների գծով նվազեցվող ժամանակավոր տարրերություններից հետաձգված հարկային ակտիվները ճանաչվում են այնքանով, որքանով հավանական է, որ ժամանակավոր տարրերությունները կհակադարձեն տեսանելի ապագայում և կինի հարկվող շահույթը, որի դիմաց հնարավոր կինի օգտագործել ժամանակավոր տարրերությունները:

Հետաձգված հարկային ակտիվների հաշվեկշռային արժեքը վերաբանվում է յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և նվազեցվում է այնքանով, որքանով այևս հավանական չէ, որ բավարար հարկվող շահույթը կինի, որի դիմաց կօգտագործվի հետաձգված հարկային ակտիվը: Չճանաչված հետաձգված հարկային ակտիվները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ և ճանաչվում այնքանով, որքանով հավանական է, որ ապագա հարկվող շահույթը թույլ կտա վերականգնել հետաձգված հարկային ակտիվը:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները չափվում են այն հարկային դրույքաչափերով, որոնք ակնկալվում են, որ կիրառվեն այն տարում, երբ ակտիվները կիրացվեն կամ պարտավորությունները կմարվեն հիմնելով հաշվետու ամսաթվի դրությամբ կիրառված կամ կիրառման ենթակա օրենքով սահմանված հարկային դրույքաչափերի (և հարկային օրենքների) վրա:

Հետաձգված հարկը, որը վերաբերվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներին կամ սեփական կապիտալի հողվածներին, ճանաչվում է այլ համապարփակ ֆինանսական արդյունքներում կամ սեփական կապիտալում, և ոչ թե շահույթում կամ վնասում:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները հաշվանցվում են, եթե կա ընթացիկ հարկային ակտիվները ընթացիկ հարկային պարտավորությունների հետ հաշվանցելու իրավաբանորեն ամրագրված իրավունք, և հետաձգված հարկերը վերաբերում են միևնույն հարկվող կազմակերպությանը և հարկային մարմիններին:

Որպես ձեռնարկատիրական գործունեության միավորման մաս ձեռքբերված հարկային օգուտները, որոնք այդ ամսաթվի դրությամբ չեն բավարարում առանձին ճանաչման չափանիշներին, կճանաչվեն հետազայռում փաստերի և իրողությունների փոփոխությունների վերաբերյալ նոր տեղեկատվության առկայության դեպքում:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**թ) Շահութահարկ (շարունակություն)**

Ճշգրտումը կդիտարկվի որպես նվազեցում գուրվիլից (քանի դեռ այն չի գերազանցում գուրվիլի արժեքը), եթե այն տեղի է ունեցել չափման ժամանակաշրջանի ընթացքում, կամ կճանաչվի շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում, եթե տեղի է ունեցել չափման ժամանակաշրջանից դուրս:

*Նշանակալից դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ*

Դատողություն է պահանջվում՝ որոշելու, թե որ գործառնություններն են համարվում հարկում շահույթից, հակառակ գործառնական ծախսերի. Դատողություն է նաև պահանջվում հետաձգված հարկային ակտիվները ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ճանաչելու համար: Հետաձգված հարկային ակտիվները, այդ թվում չօգտագործված հարկային վնասներից առաջացող, նմրից պահանջում են ապագա ժամանակաշրջանում բավարար հարկվող շահույթ առաջանելու հավանականության գնահատում, ճանաչված հետաձգված հարկային ակտիվները օգտագործման համար:

Ապագա հարկվող շահույթի առաջացման մասին ենթադրությունները կախված են Ղեկավարության՝ ապագա դրամական հոսքերի գնահատումներից: Ապագա հարկվող շահույթի այս գնահատումները հիմնված են գործառնական գործունեությունից դրամական միջոցների հոսքերի կանխատեսումների վրա (որոնց վրա ազդում են արտադրության և վաճառքի ծավալները, ապրանքների գները, պահուստները, գործառնական ծախսերը, փակման և վերականգնողական ծախսները, կապիտալ ծախսումները, շահաբաժնները և այլ կառավարչական գործարքները): Ապագա դրամական միջոցների հոսքերի և հարկվող շահույթի՝ գնահատումներից նշանակալի տարբերությունը կազմի հաշվետու ամսաթվի դրությամբ նմրի գույն հետաձգված հարկային ակտիվների օգտագործման հնարավորության վրա:

**թ) Ռոյալթիներ**

Բացի շահութահարկից, նմրի համախմբված ֆինանսական հաշվետվությունները ներառում են նաև, և ճանաչում են որպես շահույթի հարկում, գույն շահույթի գծով այլ հարկատեսակներ:

Ռոյալթիները, ուսուրսերի վարձակարների գծով հարկերը և հասույթի վրա հիմնված հարկերը հաշվառվում են համաձայն ՀՀՍՍ 12-ի, երբ համապատասխանում են շահութահարկի բնութագրիչներին: Վերջինս տեղի է ունենում այն դեպքում, երբ պետական մարմնի կողմից հարկերը գանձվում են հիմնվելով հարկվող շահույթի վրա (այլ ոչ արտադրանքի ֆիզիկական ծավալի վրա, կամ որպես տոկոս հասույթից): Ժամանակավոր տարբերությունների ճշգրտումից հետո: Նման համաձայնությունների համար ընթացիկ և հետաձգված շահութահարկը հաշվարկվում է նույն հիմքերով, ինչ վերը նշված հարկաման այլ ձևերի համար: Ռոյալթիների և այլ հարկատեսակների գծով առաջ եկող պարտավորությունները, որոնք չեն բավարարում այս չափանիշներին, ճանաչվում են որպես ընթացիկ պահուստներ և ներառվում են այլ ծախսերում:

Ռոյալթիները հաշվարկելիս կիրառվում են այն դրույքները, որոնք ուժի մեջ են եղել կամ, ըստ եռթյան, ուժի մեջ են եղել հաշվետու ամսաթվի դրությամբ: Ռոյալթիները ճանաչվում են շահույթում կամ վնասում տարեկան կտրվածքով՝ իմբը ընդունելով հասույթի և հարկվող շահույթի համակցությունը՝ ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն: Ռոյալթիները բաղկացած են երկու բաղադրիչներից հասույթի 4%-ի չափով հաշվարկվող ռոյալթի և հարկվող շահույթի 12.5%-ի չափով հաշվարկվող ռոյալթի ճշգրտված կիրառելի օրենքների և կանոնակարգերի ուղեցույցների և պահանջների համաձայն:

Ղեկավարությունը գունում է, որ ռոյալթի գծով ծախսն իրենից շահութահարկ չի ներկայացնում, քանի որ ընդհանուր հասույթի գործոնը (համախառն ցուցանիշը) եական է վճարվելիք ռոյալթի գումարի որոշման գործնթացում: Ռոյալթիները հաշվառվում են որպես այլ գործառնական ծախսեր:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**Ժ) Պաշարներ**

Դունձի և մոլիբդենի խտանյութը, արտադրության ցիկլում գտնվող մետաղը և հանքաքարի պաշարները ֆիզիկապես չափվում են կամ զնահատվում և արժնորդվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Իրացման զուտ արժեքը ապրանքի հաշվարկված ապագա վաճառքի գինն է, որով Խումբը ենթադրում է իրացնել այն, եթե ապրանքը լինի արտադրված և վաճառված՝ հանած արտադրությունը ավարտին հասցնելու և վաճառքի ծախսումները: Այն դեպքում, եթե դրամի ժամանակային արժեքը նշանակալի է, ապագա վաճառքի գները և ավարտին հասցնելու ծախսումներ զեղչվում են:

Եթե հանքաքարի պաշարների մշակումը չի ակնկալվում հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում, այն ներառվում է ոչ ընթացիկ ակտիվների մեջ, և իրացման զուտ արժեքը հաշվարկվում է զեղչված դրամական հոսքերի մեթոդով: Արժեքը որոշվում է միջին կշռված արժեքի մեթոդով և ներառում է զնաման ուղղակի ծախսումները և փոփոխուն և ֆիքսված վերադիր ծախսումների համապատասխան մասը ներառյալ ամորտիզացիան և մաշվածությունը, որոնք կատարվել են նյութերի պատրաստի արտադրանքի փոխարկման ժամանակ, նորմալ արտադրական հզրության հիման վրա: Համատեղ արտադրանքների միջև արտադրական ծախսումների բաշխումն իրականացվում է հաշվի առնելով արտադրանքների հարաբերական վաճառքի գները՝ արտադրության ավարտից հետո: Յուրաքանչյուր մետաղի փոխարկման ծախսերը, որոնք հնարավոր է տարանշատել, բաշխվում են համապատասխանաբար:

Նյութերը և այլ պաշարները չափվում են սկզբնական արժեքից և իրացման զուտ արժեքից նվազագույնով: Նյութերի և այլ պաշարների սկզբնական արժեքը հաշվարկվում է առաջինը մուտք, առաջինը ելք սկզբունքով և ներառում է պաշարների ձեռքբերման ծախսերը, արտադրական կամ փոխարկման ծախսերը և դրանք ներկա գտնվելու վայր և վիճակի բերելու հետ կապված այլ ծախսերը:

Հնացած պաշարների պահուստները որոշվում են յուրաքանչյուր պաշարներից ելնելով: Պարբերաբար իրականացվում են ուսումնասիրություններ հնացած պաշարների պահուստների որոշման համար:

**ի) Հիմնական միջոցներ**

**(i) Ճանաչում և չափում**

Հիմնական միջոցները հաշվառվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և կուտակված արժեքրկումից կորուստները:

Սկզբնական արժեքը ներառում է ակտիվի ձեռքբերմանն ուղղակի վերագրելի ծախսումները: Մեփական ուժերով կառուցված ակտիվների սկզբնական արժեքը ներառում է նյութերի արժեքը և ուղղակի աշխատուժի գծով ծախսները, ակտիվի իրավագործման համար աշխատանքային վիճակի բերելու հետ անմիջականորեն կապված ցանկացած այլ ծախսերը, ակտիվի ապատեղակայման և քանդման ծախսերը, գտնվելու տեղանքի վերականգնման ծախսերը և կապիտալացված փոխառության ծախսերը: Ձեռքբերված համակարգչային ծրագիրը, որը հանդիսանում է համապատասխան սարքավորման ֆունկցիոնալության անբաժանելի մասը, կապիտալացվում է որպես սարքավորման մաս:

Եթե հիմնական միջոցի միավորը բաղկացած է օգտակար ծառայության տարրեր ժամկետ ունեցող խոշոր բաղկացուցիչներից, ապա այդ բաղկացուցիչները հաշվառվում են որպես հիմնական միջոցների առանձին միավորներ (հիմնական բաղկացուցիչներ):

Հիմնական միջոցի միավորի օտարումից ստացված շահույթը կամ վնասը որոշվում է՝ համեմատելով օտարումից ստացված մուտքերը հիմնական միջոցի հաշվեկշռային արժեքի հետ, և ճանաչվում է զուտ հիմունքով այլ եկամուտ/այլ ծախս հողվածում շահույթը կամ վնասում:

**(ii) Հետուագա ծախսումներ**

Հիմնական միջոցների բաղկացուցչի փոխարինման ծախսերը ճանաչվում են միավորի հաշվեկշռային արժեքում, եթե հավանական է, որ Խումբը կհոսեն այդ միավորի հետ կապված ապագա տնտեսական օգուտները, և դրա արժեքը հնարավոր է արժանահավատորեն չափել: Փոխարինվող բաղկացուցչի հաշվեկշռային արժեքն ապահանաչվում է: Հիմնական միջոցների ամենօրյա սպասարկման ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում առաջանալուն պես:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**ի) Հիմնական միջոցներ (շարունակություն)**

**(iii) Մաշվածություն**

Հիմնական միջոցների միավորների մաշվածության հաշվարկը սկսվում է դրանց տեղադրմանը պատրաստ լինելու պահից, իսկ սեփական ուժերով կառուցված ակտիվների դեսպրում՝ վերջիններիս կառուցումն ավարտելու և շահագործմանը պատրաստ լինելու պահից: Մաշվածությունը հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի հիման վրա՝ հանած դրա մնացորդային արժեքը:

Արտադրական հոսքագծում օգտագործվող ակտիվների գծով մաշվածությունը հաշվառվում է կիրառելով թողարկված միավորների մեթոդ՝ իմֆ ընդունելով ակտիվի գնահատված ընդհանուր արտադրողականությունը և փաստացի արդյունահանված ու մշակված հանքաքարը: Բոլոր այլ ակտիվների գծով մաշվածությունը ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը հիմնական միջոցների յուրաքանչյուր մասի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում, քանի որ այս մեթոդն առավել ճշգրիտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգուտների օգտագործման մոդելը: Հողերի գծով մաշվածությունը չի հաշվարկվում:

Ստորև ներկայացված են նշանակալի հիմնական միջոցների օգտակար ծառայության գնահատված ժամկետները ընթացիկ և համարելի ժամանակաշրջանների համար.

Շենքեր	Թողարկված միավորների մեթոդ	Գծային մեթոդ
► արտադրական շենքեր և շինություններ	միջին հզորություն 182-ից 303 մլն տոննա	10-ից 100 տարի
► այլ շենքեր		
Մեքենա-սարքավորումներ		
► արտադրական մեքենա-սարքավորումներ	միջին հզորությունը 18-ից 352 մլն տոննա	2-ից 100 տարի
► այլ մեքենա-սարքավորումներ		2-ից 70 տարի
Տնտեսական գույք		25 տարի
Հանքարդյունաբերության ակտիվներ		

Մաշվածության հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մնացորդային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր հաշվետու ամսարկի դրությամբ և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**Վ Մակարացման (բափոնների հեռացման) ժամանք**

Որպես հանքարդյունաբերական գործունեության մաս, Խումբը ունենում է մակարացման (բափոնների հեռացման) ժամանքը իր գործունեության և զարգացման, և արտադրության փուլում: Հանքի զարգացման փուլում առաջացող մակարացման ծախսները, մինչ արտադրության փուլի սկսելը (զարգացման մակարացում), կապիտալացվում են որպես հանքի շինարարության արժեքի մաս, և հետագայում ամորտիֆացվում են իր օգտակար ծառայության ժամկետի ընթացքում՝ թողարկված միավորների մեթոդով: Զարգացման մակարացման ծախսումների կապիտալացումը դադարում է, եթե հանքը/բաղադրիչը հանձնվում է շահագործման կամ պատրաստ է շահագործման դեկալարության նախատեսված ձևով:

Բաց հանքի արտադրական փուլում իրականացված մակարացման գործունեության (արտադրական մակարացում) հաշվառումը ներկայացված է ստորև: Արտադրության սկսելուց հետո, հանքի հետագա զարգացումը կարող է պահանջել արտաստոր մեծ ծախսի մակարացման անհրաժեշտություն, որն, ըստ էության, նման է մակարացման զարգացման փուլին: Նման մակարացման ծախսերը հաշվառվում են այնպես, ինչպես զարգացման փուլի մակարացման ծախսերը (ինչպես ներկայացված է վերևում):

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**I Մակարացման (թափոնների հեռացման) ծախսեր (շարունակություն)**

Խումբը մակարացումից կարող է ստանալ երկու տեսակի օգուտ՝ օգտագործելի հանքաքար, որը կօգտագործվի պաշարների արտադրությունում, և քարելավված հասանելիություն հանքաքարի լրացուցիչ ծավալներին, որոնք կարողունահանվեն հետագայում։ Այն դեպքում, եթե մակարացման գործունեությունից առաջացող օգուտն արտահայտվում է արտադրված պաշարների տեսքով, խումբը մակարացման ծախսումները հաշվառում է որպես այդ պաշարների արտադրության ծախսի մաս։ Եթե ստացվող օգուտն արտահայտվում է հանքաքարի հասանելիությանը բարելավման տեսքով, ապա Խումբը ճանաչում է այդ ծախսումները՝ որպես ոչ ընթացիկ ակտիվ, որպես «մակարացման գործունեության ակտիվ», եթե բավարարվում են հետևյալ չափանիշները՝

- ▶ Մակարացման գործունեության հետ կապված ապագա տնտեսական օգուտները (հանքաքարի հասանելիության բարելավում) հավանական են,
- ▶ Հանքաքարի այն բաղադրիչը, որին հասանելիությունը բարելավվել է, կարող է նույնականացնել,
- ▶ Այդ բաղադրիչի գծով մակարացման գործունեության ծախսերը կարող են արժանահավատորեն չափվել։

Եթե այս չափանիշներից որևէ մեկը չի բավարարվում, մակարացման գործունեությունից առաջացող ծախսերը առաջանալուն պես արտացոլվում են շահույթում կամ վնասում՝ որպես գործառնական ծախսեր։

Հանքի բաղադրիչների բացահայտման համար Խումբը սերտորեն համագործակցում է հանքարդյունաբերական գործունեության անձնակազմի հետ յուրաքանչյուր հանքարդյունաբերական գործունեության համար՝ յուրաքանչյուր հանքի պլանի վերլուծման նպատակով։ Ըստհանուր առմամբ, հանքի բաղադրիչը հանդիսանում է ընդհանուր հանքի ներքանաս, և հանքը կարող է ունենալ տարբեր ենթամասեր։ Հանքի պլանը, և, հետևաբար, բաղադրիչների նույնականացումը, կարող են տարբերվել հանքերի միջև՝ պայմանավորված մի շարք պատճառներով։ Պատճառները ներառում են, քայլ չեն սահմանափակվում, ապահնի տեսակը, ընդհանուր հանքի երկրաբանական բնութագրերը, աշխարհագրական դիրքը և/կամ ֆինանսական նկատառումները։ Հաշվի առնելով Խումբի գործունեության բնույթը, բաղադրիչներն, ընդհանուր առմամբ, հանդիսանում են զգայի խոշնդոտներ, և հանդիսանում են ավելի մեծ ներդրումային որոշման մաս, որը պահանջում է խորհրդի հաստատումը։

Մակարացման գործունեության ակտիվը սկզբնապես չափվում է սկզբնական արժեքով, որը՝ հանքի բաղադրիչի հասանելիությունը բարելավվելու նպատակով իրականացված, մակարացման գործունեությանը ուղղակիորեն վերաբերող ծախսումների հանքագումարն է՝ գումարած տեղաքաշնված ուղղակիորեն վերագրելի վերադիր ծախսերը։ Եթե արտադրական մակարացման հետ միաժամանակ տեղի են ունենում լրացուցիչ գործողություններ, բայց որոնք անհրաժեշտ չեն արտադրական մակարացման նախատեսվածի պես իրականացման համար, այս ծախսերը չեն ընդգրկվում մակարացման գործունեության ակտիվի արժեքի մեջ։

Եթե մակարացման գործունեության ակտիվի և արտադրված ապրանքների գծով ծախսերը հնարավոր չեն առանձնացնել, ապա կիրապում է արտադրության համապատասխան չափանիշի վրա հիմնված վերագրման սկզբունքը արտադրական մակարացման ծախսների՝ մակարացման գործունեության ակտիվի և արտադրված ապրանքների միջև բաշխման համար։ Արտադրության այդ չափանիշը հաշվարկվում է հանքաքարի նույնականացված բաղադրիչի համար և օգտագործվում որպես ուղենիշ՝ որոշելու ապագա օգուտների ստեղծման համար տեղի ունեցած լրացուցիչ գործունեությունների ծավալները։ Որպես չափանիշ Խումբը օգտագործում է հանքաքարի արտադրության տվյալ ծավալների համար արդյունահանված թափոնների ծավալները՝ համեմատած ակնկալվող ծավալների հետ։

Մակարացման գործունեության ակտիվը կարող է հաշվառվել որպես գոյություն ունեցող ակտիվի լրացում կամ բարելավում, և ֆինանսական վիճակի մասին հաշվետվությունում ներկայացված է առանձին տողով։ Դրանք կազմում են ընդհանուր ներդրման մաս համապատասխան դրամաստեղծ միավորում, որոնք եւ դիտարկվում են արժեքրկման համար, եթե դեպքերի կամ հանգամանքներ փոփոխությունը վկայում են, որ հաշվեկշռային արժեքը կարող է չփոխատուցվել։

Մակարացման գործունեության ակտիվը հաջորդիվ մաշեցվում է կիրառելով թողարկված միավորների մեթոդը հանքաքարի նույնականացված բաղադրիչի ակնկալվող օգտագործման ծառայության ընթացքում, որի հասանելիությունը բարելավվել է մակարացման գործունեության արդյունքում։ Տևեսապես փոխհատուցվող պաշարները, որոնք ներառում են հաստատված և հնարավոր պահուստները, օգտագործվում են հանքաքարի ակնկալվող օգտակար ծառայության ժամկետը որոշելու համար։ Այնուհետև, մակարացման գործունեության ակտիվը հաշվառվում է սկզբնական արժեքով հանած մաշվածությունը և արժեքրկման կորուստները։

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**Ա) Մակարացման (բափոնների հեռացման) ծախսեր (շարունակություն)**

Նշանակալի դատողություններ, գնահատումներ և ենթադրություններ

Զարգացման մակարացումը արտադրական մակարացումից տարբերակելու, ինչպես նաև պաշարների արդյունահանման հետ կապված արտադրական մակարացումը մակարացման գործունեության ակտիվի առաջացման հետ կապված արտադրական մակարացումից տարբերակելու համար անհրաժեշտ են նշանակալի դատողություններ:

Եթե Խումբը յուրաքանչյուր բաց հանքարդյունաբերական գործունեության համար որոշում է իր արտադրական մակարացումը, այն իր յուրաքանչյուր հանքարդյունաբերական գործունեության համար որոշում է ընդհանուր հանքի առանձին բաղադրիչները: Նույնականացվող բաղադրիչը ընդհանուր հանքի որոշակի ծավալն է, որն ավելի հասանելի է դառնում մակարացման գործունեության միջոցով: Այս բաղադրիչները որոշելու և սահմանելու, ինչպես նաև մակարացվող բափոնների և այս բաղադրիչներից յուրաքանչյուրում արդյունահանվող հանքարդի ակնկալիող ծավալները (տոննաներով) որոշելու համար անհրաժեշտ են նշանակալի դատողություններ: Այս գնահատումներն իրականացվում են յուրաքանչյուր առանձին հանքարդյունաբերական գործունեության համար հանքի պլանում առկա տեղեկատվության հիման վրա: Հանքի պլանները, և, հետևաբար, բաղադրիչների նույնականացումը, կարող են տարբերվել հանքերի միջև՝ պայմանավորված մի շարք պատճառներով: Դրանք ներառում են, բայց չեն սահմանափակվում, ապրանքի տեսակը, ընդհանուր հանքի երկրաբանական բնութագրերը, աշխարհագրական դիրքը և/կամ ֆինանսական նկատառումները:

**Բ) Ոչ նյութական ակտիվներ**

**Համակարգչային ծրագրեր**

Խմբի կողմից ձեռքբերված համակարգչային ծրագրերը, որոնք ունեն օգտակար ծառայության որոշակի ժամկետ, չափվում են սկզբնական արժեքով՝ հանաձ կուտակված ամորտիզացիան և կուտակված արժեգրկումից կորուստները:

Տետագա ծախսումները կապիտալացվում են միայն այն ժամանակ, եթե դրանք ավելացնում են այն առանձին ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգտականությունը, որին վերաբերում են: Բոլոր այլ ծախսումները ճանաչվում են շահույթում կամ վնասում՝ առաջանալուն պես:

Ամորտիզացիան հաշվարկվում է ակտիվի սկզբնական արժեքի կամ դրան փոխարինող այլ գումարի գծով՝ հանաձ դրա մասնաբարային արժեքը: Ամորտիզացիան ճանաչվում է շահույթում կամ վնասում՝ կիրառելով գծային մեթոդը ոչ նյութական ակտիվի օգտակար ծառայության գնահատված ժամկետի ընթացքում սկսած այն պահից, եթե դրանք դառնում են մատչելի օգտագործման համար, քանի որ այս մեթոդը առավել ճշգրիտ է արտացոլում ակտիվի հետ կապված ապագա տնտեսական օգտականությունը օգտագործման մոդելը: Օգտակար ծառայության գնահատված ժամկետն ընթացիկ և համարելի ժամանակաշրջանների համար հետևյալն է:

► Համակարգչային ծրագրեր 10 տարի

Ամորտիզացիայի հաշվարկի մեթոդները, օգտակար ծառայության ժամկետները և մասնաբարային արժեքները վերանայվում են յուրաքանչյուր ֆինանսական տարվա վերջում և անհրաժեշտության դեպքում՝ ճշգրտվում:

**Ծ) Հետախուզման և գնահատման ակտիվներ**

**(i) Նախքան իրավունքի ձեռքբերման ծախսեր**

Մինչ լիցենզիայի ստանալը կատարված ծախսերը վերաբերում են ծախսերին, որոնք Խումբը կրել է նախքան համապատասխան տարածքն ուստամբական օրինական իրավունքի ձեռքբերումը: Նման ծախսերը կարող են ներառել հետազոտման տվյալների ձեռքբերման և այդ տվյալների վերլուծման հարակից ծախսերը: Այս ծախսերը ճանաչվում են դրանց առաջանալու ժամանակաշրջանում:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**Ծետախուզման և գնահատման ակտիվներ (շարունակություն)**

**(ii) Հետախուզման և գնահատման ծախսումներ**

Հետախուզման և գնահատման գործունեությունը ներառում է օգտակար հանածոների որոնում, տեխնիկական իրագործելիության որոշում և որևէ որոշակի հանածոյի առևտրային կենսունակության գնահատում:

Հետախուզման և գնահատման գործունեությունը ներառում է՝

- ▶ Պատմական հետախուզման տվյալների ուսումնասիրում և վերլուծություն,
- ▶ Երկրաբանական ուսումնասիրությունների միջոցով հետախուզման տվյալների հավաքագրում,
- ▶ Հետախուզական հորատում և նմուշառում,
- ▶ Հանածոների ծավալի և աստիճանի որոշում և ստուգում,
- ▶ Փոխադրման և ենթակառուցվածքային պահանջների ուսումնասիրություն,
- ▶ Շուկայի և ֆինանսների ուսումնասիրությունների իրականացում

Գոյրելիուն ունեցող հետախուզման տարածքի հետախուզման իրավունքի համար վճարված լիցենզիայի ծախսումները կապիտալացվում են և ամրությացվում են մինչև թույլտվության ժամկետի ավարտը:

Հետախուզման օրինական իրավունք ստանալուց հետո, հետախուզման և գնահատման ծախսումները ձանաշվում են շահուուր կամ վնասում առաջանալու պահին, բացառությամբ այն դեպքերի, երբ Խումբը եզրակացնում է, որ ապագա տնտեսական օգուտները ավելի շուտ հնարավոր են, որ կստացվեն, քան ոչ Այդ ծախսումները ներառում են ուղղակիորեն վերագրելի աշխատակիցների վարձատրության ծախսերը, նյութերի և վառելիքի օգտագործման, հետազոտման, հորատման ծախսումները և կապալառուներին կատարված վճարումները:

Որոշելու համար, թե արդյո՞ք ծախսումները համապատասխանում են կապիտալացման չափանիշներին՝ օգտագործվում են տեղեկատվության տարեկ աղբյուրներ։ Ապագա օգուտների հավանականությունը որոշելու համար օգուգործվող տեղեկատվությունը կախված է իրականացված հետախուզման և գնահատման աշխատանքների խորությունից։ Հետախուզման և գնահատման ծախսումները, որոնք վերաբերում են այն լիցենզիաներին, որոնցով հանած դեռ չի ձևագրվել՝ ծախսազրկում են, երբ կազմակերպությունը կրում է տվյալ ծախսումները, քանի դեռ նշանակալի գնահատում չի իրականացվում, որպեսզի հաստատվի, որ հանածոյի արդյունահանման տեխնիկական իրագործելիությունը և առևտրային կենսունակությունը ակներև են։ Այս փուլում դուրս գրված ծախսումները ներառվում են շահուուր կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում որպես այլ ծախսեր։

Զերծարկատիրական գործունեության համախմբման արդյունքում ձեռքբերված հետախուզման և գնահատման ակտիվները սկզբնապես ձանաշվում են իրական արժեքով, ներառելով ուսուրանունը և հետախուզման պոտենցիալը, որոնք ենթադրվում են, որ ներկայացնում են ավելի մեծ արժեք, քան հաստատված և հնարավոր պաշարները։ Նմանապես, հետախուզման և գնահատման ակտիվների (որոնք չեն ներկայացնում ձեռնարկատիրական գործունեություն) ձեռք բերելու հետ կապված ծախսումները նույնպես կապիտալացվում են։ Այդ ակտիվները հետազում չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված արժեքումը։

Առևտրային առումով կենսունակ պաշարների հայտնաբերումից հետո, հետախուզման և գնահատման ակտիվները ստուգվում են արժեգրկման տեսանկյունից, և փոխանցվում են «Հանքարդյունաբերական ակտիվներ», որը հանդիսանում է «Հիմնական միջոցներ»-ի ենթադաս։ Հետախուզման և գնահատման փուլում ամրությացիա չի հաշվարկվում։

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**δ) Հետախուզման և գնահատման ակտիվներ (շարունակություն)**

**(iii) Հետախուզման և գնահատման ակտիվների արժեզրկում**

Հետախուզման և գնահատման ակտիվները պետք է ստուգվեն արժեզրկման համար, եթե փաստերն ու հանգամանքները վկայում են, որ հետախուզման և գնահատման ակտիվների հաշվեկշռային արժեքը կարող է գերազանցել իր փոխառությունը գումարը։ Համաձայն ՖՀՄՍ 6-ի, ներքոնիշյալ մեկ կամ մի քանի փաստերի և հանգամանքների առկայությունը վկայում է, որ կազմակերպությունն իր հետախուզման և գնահատման ակտիվների համար պետք է արժեզրկման ստուգիմ իրականացնի (թվարկումը սպառիչ չէ)։

- ▶ Եթե տվյալ ժամանակաշրջանում լրացել է կամ մոտ ապագայում պետք է լրանա այն ժամկետը, որի ընթացքում կազմակերպությունը իրավունք ունի հետախուզելու համապատասխան տարածքը, և չի սպասվում, որ այն կերպարագիր:
- ▶ Եթե համապատասխան տարածքում օգտակար հանածոների հետազա հետախուզման և գնահատման հիմնական ծախսը ոչ բյուջետավորված է, և ոչ էլ պլանավորված.
- ▶ Եթե համապատասխան տարածքում օգտակար հանածոների հետախուզումը և գնահատումը չի հանգեցրել օգտակար հանածոների՝ առևտրային առումով կենսունակ քանակությունների հայտնաբերմանը, և կազմակերպությունը որոշել է այլև շարունակել այդ տարածքում նմանատիպ գործունեությունների իրականացումը.
- ▶ Եթե բավկանաչափ տվյալներ կան վկայելու, որ, չնայած համապատասխան տարածքում հնարավոր է անցնել օգտակար հանածոների մշակմանը, անհավանական է, որ հետախուզման և գնահատման ակտիվի հաշվեկշռային արժեքը հաջող մշակման կամ վաճառքի դեպքում ամբողջովին կփոխիհատուցվի։

**Նշանակալի դաստողություններ, գնահատումներ և ենթադրություններ**

Հետախուզման և գնահատման ակտիվների ծախսումների հետ կապված՝ Խմբի հաշվապահական հաշվառման քաղաքանության կիրառումը պահանջում է դատողության կիրառում որոշելու համար, թե արդյոք ապագա տնտեսական օգուտներ կստացվեն ապագա շահագործումից կամ վաճառքից, կամ թե արդյոք գործընթացները չեն հասել այն փուլին, որ հնարավոր է իրականացնել պաշարների առկայության որշամիտ գնահատում, Խումբը պետք է կիրարի բազմաթիվ գնահատումներ և ենթադրություններ։ Հետախուզման և գնահատման ծախսների հետաձգումը անմիշական ազդեցություն է ունենում գնահատումների վրա։ Հետաձգման քաղաքականությունը դեկավորությունից պահանջում է, որպեսզի որոշելի գնահատումներ և ենթադրություններ արվեն ապագա իրադարձությունների և հանգամանքների մասին, մասնավորապես, թե արդյոք հնարավոր է իրականացնել տնտեսապես կենսունակ արդյունահանման գործունեություն։ Ցանկացած նման գնահատում և ենթադրություն կարող է փոխվել նոր տեղեկատվության ի հայտ գալու պարագայում։ Եթե ծախսումների կապիտալացումից հետո հայտնի է դառնում, որ ծախսների փոխառությունը հավանական չէ, համապատասխան կապիտալացված գումարը դուրս է գրվում շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին համախմբված հաշվետվությունում այն ժամանակահատվածում, եթե նոր տեղեկատվությունը դառնում է հասանելի։

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**կ) Ոչ ֆինանսական ակտիվների արժեքը**

Ցուրաքանչյուր հաշվետու ամսաթվի դրությամբ Խումբը գնահատում է, թե արդյոք գոյություն ունի հայտանիշ, ըստ որի որ ակտիվը (կամ դրամատեղ միավորը) կարող է արժեգրկված լինել: Եթե որևէ այդպիսի հայտանիշ առկա է, կամ եթե պահանջվում է ակտիվի տարեկան արժեգրկման ստուգում, ապա Խումբը գնահատում է ակտիվի կամ դրամատեղ միավորի փոխհատուցվող գումարը: Ակտիվի կամ դրամատեղ միավորի փոխհատուցվող գումարը որոշվում է որպես հետևյալ երկու մեծություններից առավելագույնը: օգտագործման արժեքը և իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը: Եթե ակտիվի կամ նրա դրամատեղ միավորի հաշվեկշռային արժեքը գերազանցում է վերջինի գնահատված փոխհատուցվող գումարը, ապա ակտիվը/դրամատեղ միավորը համարվում է արժեգրկված, և դրա արժեքը նվազեցվում է մինչև փոխհատուցվող գումարը: Օգտագործման արժեքը գնահատելիս դրամական միջոցների գնահատված ապագա հոսքերը զեղչվում են օգտագործելով մինչև հարկումը զեղչման այն դրույքը, որն արտացոլում է ժամանակի մեջ դրամի արժեքի տվյալ շրջանի ներկա գնահատականը և այդ ակտիվին կամ դրամատեղ միավորին բնորոշ ռիսկերը: Իրական արժեքը՝ հանած վաճառքի ծախսերը որոշելիս հաշվի են առնվում շուրջական վերջին գործարքները (հասանելիության դեպքում): Եթե այդպիսի գործարքներ չկան, ապա օգտագործվում է համապատասխան գնահատման մոդել:

Խմբի արժեգրկման հաշվարկը հիմնված է մանրամասն մշակված բյուջեների և կանխատեսումների վրա: Գնահատված կանխիկ դրամական միջոցների հոսքերը հիմնված են ապագա ակնկալվող արտադրության, մետաղի վաճառքի գների, գործառնական ծախսերի և կանխատեսվող կապիտալ ծախսումների վրա, իսկ տասը տարուց ավելի դրամական միջոցների հոսքերը հիմնված են «հանքի լյանքի» պահնի վրա: Շարունակական գործունեությունների արժեգրկումից կորուստները, ներառյալ պաշարների արժեգրկումը, ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում արժեգրկված ակտիվի գործառույթին համապատասխան ծախսային դաշտում:

**Նշանակալի գնահատումներ և ենթադրություններ**

Արժեգրկման գնահատման համար անհրաժեշտ է այնպիսի գնահատումների և ենթադրությունների օգտագործումը, ինչպիսիք են երկարաժամկետ ապրանքային գները (հաշվի առնելով ընթացիկ և պատմական գները, գների միտումները և հարակից գործոնները), զեղչման դրույքափերը, գործառնական ծախսերը, կապիտալի ապագա պահանջները, փակման և վերականգնման ծախսերը, հետախուզման պոտենցիալը, պահուստները և գործառնական կատարումը (որը ներառում է արտադրության և վաճառքի ծավալներ): Այս գնահատումներն ու ենթադրությունները ենթակա են ոիսկի և անդրոշության: Հետևաբար, հավանականություն կա, որ հանգամանքների փոփոխությունները կազմի այս կանխատեսումների վրա, որոնք կարող են ազդել ակտիվների և/կամ դրամատեղ միավորների- ի փոխհատուցվող գումարի վրա:

**հ) Պահուստներ**

**(i) Տեղանքի վերականգնման պահուստներ**

Խումբը կրի տեղանքի վերականգնման ծախսերը կամ գործունեության ընթացքում կամ Խմբի հանքարդյունաբերական գույքի գործառնական կյանքի ավարտից հետո: Խումբը գնահատում է տեղանքի վերականգնման իր պահուստը յուրաքանչյուր հաշվետու ժամանակաշրջանի դրությամբ: Տեղանքի վերականգնման պահուստը ճանաչվում է, եթե Խումբը ունի ներկա իրավական կամ կառուցղական պարտավորություն որպես անցյալ դեպքերի արդյունք, և հավանական է, որ այդ պարտավորությունը մարելու նպատակով կապահանջմի տնտեսական օգուտներ մարմանագորոդ միջոցների արտահոսք, և այդ պարտավորությունը կարելի է արժանահավատորեն չափել: Այս վերականգնման գործողությունները ներառում են՝ հանքի, թափոնների լցակուտերի, պոշամբարների և կից կառուցվածքների փակում և տուժած տարածքների վերականգնում, բարելավում և բուսականության վերականգնում:

Եթե պարտավորությունը սկզբնապես ճանաչվում է, գնահատված ծախսերի ներկա արժեքը կապիտալացվում է՝ ավելացնելով հանքարդյունաբերական ակտիվների հաշվեկշռային արժեքը այն շափով, որքանով այն իրականացվել է հանքի զարգացման/կառուցման համար: Թափոնների լցակուտերի վերականգնման և հանքի փակման հետ կապված ծախսերը ներկայացվում են գուտ ներկա արժեքներով և ճանաչվում են շահույթում կամ վնասում:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**հ) Պահուստներ (շարունակություն)**

Տեղանքի վերականգնման ժամանակացույցի կամ գնահատված ապագա ծախսերի փոփոխությունները ճանաչվում են առաջընթաց ճշգրտելով տեղանքի վերականգնման պարտավորության և համապատասխան ակտիվի մնացորդը, եթե նախնական գնահատումը սկզբնապես ճանաչվել է ՀՀՍՍ 16-ի համաձայն որպես ակտիվի մաս, այլապես՝ փոփոխությունները ճանաչվում են շահույթում կամ վնասում:

Տեղանքի վերականգնման պարտավորության ցանկացած նվազեցում, և, հետևաբար, ցանկացած նվազեցում ակտիվից, որին այն վերաբերում է, չի կարող գերազանցել ակտիվի հաշվեկշռային արժեքը: Հակառակ դեպքում՝ հաշվեկշռային արժեքի գերազանցող մասը անմիջապես ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս: Փակված տեղանքների համար գնահատված ծախսերի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

Ժամանակի ընթացքում, ներկա արժեքի փոփոխությամբ պայմանավորված, զեղչված պարտավորությունը աճում է՝ հիմնված զեղչման դրույքների վրա, որոնք արտացոլում են ընթացիկ շրջակա գնահատումները և պարտավորությանը բնորոշ ռիսկերը: Զեղչման պարերական ծախսագրումը ճանաչվում է շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում որպես ֆինանսական ծախս: Փակված տեղանքների համար գնահատված ծախսերի փոփոխությունները անմիջապես ճանաչվում են շահույթի կամ վնասի և այլ համապարփակ ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում:

**ձ) Վարձակալություն**

**Խումբ՝ որպես վարձատու**

Վարձակալությունը, որի դեպքում խումբը չի փոխանցում սեփականության հետ կապված էական բոլոր ռիսկերն ու հատույցները, դասակարգվում է որպես գործառնական վարձակալություն: Վարձակալության ժամկետի ընթացքում ձևավորված վարձակալական եկամուստները հաշվառվում են գծային մեթոդով և իրենց գործառնական բնույթի պատճառով շահույթի կամ վնասի մասին հաշվետվության մեջ ներառվում են հասույթում: Բանակցությունների և գործառնական վարձակալության կազմակերպման ժամանակ կատարված սկզբնական ուղղակի ծախսերը ավելացվում են վարձակալության տրված ակտիվի հաշվեկշռային արժեքին և վարձակալության ժամկետի ընթացքում ճանաչվում են նոյն կերպ, ինչ վարձակալական վճարները: Պայմանական վարձակալական վճարները ճանաչվում են որպես հասույթ այն ժամանակաշրջանում, եթե Խումբը դրանք վաստակել է:

**Խումբ՝ որպես վարձակալ (կիրառելի է մինչև 2019թ. հունվարի 1-ը)**

Սահմանելու համար, թե արդյոք պայմանագիրը վարձակալության է (կամ պարունակում է վարձակալություն), հիմք է ընդունվում վարձակալության սկզբի դրույթամբ պայմանագրի էռությունը: Պայմանագիրը վարձակալության է (կամ պարունակում է վարձակալություն), եթե պայմանագրի կատարումը կախված է կրնկետ ակտիվի (կամ ակտիվների) օգտագործմամբ և պայմանագրը փոխանցում է ակտիվի (կամ ակտիվների) օգտագործման իրավունքը, եթե նոյնիսկ այդ ակտիվը (կամ այդ ակտիվները) հստակ նշված չէ (չեն) պայմանագրում:

Վարձակալության սկզբի ամսաթվին վարձակալությունը դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն կամ գործառնական վարձակալություն: Վարձակալությունը, որի դեպքում սեփականության հետ կապված էական բոլոր ռիսկերն ու հատույցները փոխանցվում են նոմին, դասակարգվում է որպես ֆինանսական վարձակալություն:

Վարձակալության սկզբում ֆինանսական վարձակալությունները կապիտալացվում են վարձակալության սկզբի դրույթամբ վարձակալված միջոցի իրական արժեքով կամ նվազագրույն վարձակալության գծով վճարումների ներկա արժեքով, եթե վերջինս ավելի ցածր է: Վարձակալության գծով վճարումները բաշխվում են ֆինանսական վճարների և վարձակալության գծով պարտավորության նվազեցման միջև այնպես, որ պարտավորության մնացորդի վրա ձեռք բերվի հաստատուն տոկոսադրույքը: Ֆինանսական վճարները շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչվում են ֆինանսական ծախսերի մեջ:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**Ճ) Վարձակալություն (շարունակություն)**

Ակտիվի օգտակար ծառայության ընթացքում վարձակալված ակտիվը մաշվում է: Սակայն, եթե չկա ողջամիտ որոշակիություն, որ վարձակալության ժամկետի վերջում նույնը ձեռք կը բերի ակտիվի սեփականության իրավունքը, ակտիվը մաշվում է ակտիվի գնահատված օգտակար ծառայության և վարձակալության ժամկետներից նվազագույնի ընթացքում:

Գործառնական վարձակալություն են համարվում բոլոր այն վարձակալությունները, որոնք ֆինանսական չեն: Վարձակալության ժամկետի ընթացքում գործառնական վարձակալության զծով վճարումները շահույթի կամ վնասի մասին հաշվետվությունում ճանաչվում են որպես գործառնական ծախսեր՝ կիրառելով գծային մեթոդը:

**Խումբ՝ որպես վարձակալ (կիրառելի է 2019թ. հունվարի 1-ից հետո)**

Պայմանագրի սկզբի դրությամբ Խումբը գնահատում է, թե արդյոք պայմանագիրը վարձակալության է (կամ պարունակում է վարձակալություն): Սա տեղի ունի, եթե պայմանագիրը վճարումների դիմաց որոշ ժամանակահատվածով փոխանցում է նույնականացված ակտիվի օգտագործման վերահսկողության իրավունքը:

Խումբը բոլոր վարձակալությունների համար կիրառում է ճանաշման և չափման միասնական մոտեցում, բացառությամբ կարձաժամկետ վարձակալությունների և փոքրարժեք ակտիվների վարձակալությունների: Խումբը ճանաշում է վարձակալության զծով պարտավորություններ կատարելու համար, և օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ, որոնք ներկայացնում են հիմքում ընկած ակտիվը օգտագործելու իրավունքը:

**Օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ**

Խումբը ճանաշում է օգտագործման իրավունքի ձևով ակտիվներ վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ (այն ամսաթիվը, եթե հիմքում ընկած ակտիվը հասանելի կողանա վարձակալի կողմից օգտագործման համար): Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները չափվում են սկզբնական արժեքով՝ հանած կուտակված մաշվածությունը և արժեգրկումից կուտակված կորուստները, և ճշգրտված վարձակալության զծով պարտավորության ցանկացած վերաշափմամբ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվների սկզբնական արժեքը ներառում է ճանաշված վարձակալության զծով պարտավորությունների գումարը, սկզբնավորման ցանկացած ուղղակի ծախսումներ, վարձակալության մեկնարկի ամսաթվին կամ դրանից առաջ կատարված վարձավճարները՝ հանած ստացված ցանկացած վարձակալության խրախուսումներ: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվի մաշվածությունը հաշվարկում է գծային հիմունքով գնահատված օգտակար ծառայության ժամկետից: Վարձակալության ժամկետից նվազագույնով հետևյալ կերպ:

- ▶ Մեքնա-սարքավորումներ՝ 3-ից 15 տարի
- ▶ Փոխադրմիջոցներ և այլ սարքավորումներ՝ 3-ից 5 տարի

Եթե վարձակալական ժամկետի վերջում վարձակալված ակտիվի սեփականության իրավունքը փոխանցվում է Խմբին կամ որևէ արժեքում արտադրում է գննան օպցիոնի իրագրծումը, մաշվածությունը հաշվարկում է օգտագործելով ակտիվի գնահատված օգտակար ծառայության ժամկետը: Օգտագործման իրավունքի ձևով ակտիվները նույնական ենթակա են արժեգրկման գնահատման:

**Վարձակալության զծով պարտավորություններ**

Վարձակալության մեկնարկի ամսաթվի դրությամբ Խումբը ճանաշում է վարձակալության զծով պարտավորությունը վարձակալության ժամկետի ընթացքում վճարման ենթակա վարձավճարների ներկա արժեքով: Վարձավճարները ներառում են հաստատուն վճարումները (ներառյալ ըստ էության հաստատուն վճարումները)՝ հանած վարձակալության ցանկացած ստացվելիք խրախուսումները, վարձակալության փոփոխուն վճարումները, որոնք կախված են ինդեքսից կամ դրույթից և գումարները, որոնք սպասվում են, որ կվճարվեն վարձակալի կողմից մասցրդային արժեքի երաշխիքի ներքո: Վարձավճարները ներառում են նաև գննան օպցիոնի իրագրծման գինը, եթե Խումբը խելամտորեն համոզված է, որ կիրագրծի այդ օպցիոնը, և վարձակալությունը դադարեցնելու հետ կապված տուգանքների վճարումներ, եթե վարձակալության ժամկետն արտացոլում է Խմբի՝ վարձակալությունը դադարեցնելու օպցիոնի իրագրծումը:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(Չարունակություն)**

**Ճ) Վարձակալություն (Չարունակություն)**

Փոփոխուն վարձավճարներ, որոնք կախված չեն ինդեքսից կամ դրույթից, ճանաչվում են որպես ծախս այն ժամանակաշրջանում, որի ընթացքում տեղի է ունենում այդ վճարումներին հանգեցնող դեպքը կամ իրավիճակը (բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք կատարվել են պաշարների ստացման նպատակով):

Վարձավճարների ներկա արժեքը հաշվարկելիս Խումբը օգտագործում է վարձակալության մեկնարկի ամսաթվին լրացուցիչ փոխառության տոկոսադրույթը, քանի որ վարձակալությամբ ենթադրվող տոկոսադրույթը հնարավոր չէ հեշտությամբ որոշել: Մեկնարկի ամսաթվից հետո վարձակալության գծով պարտավորության գումարը ավելացվում է՝ վարձակալության գծով պարտավորության տոկոսը արտացոլելու համար, և նվազեցվում է՝ կատարված վարձավճարները արտացոլելու համար: Ավելին, վարձակալության գծով պարտավորության հաշվեկշռային արժեքը վերաբարձրվում է, եթե տեղի են ունենում վերաբարձրություններ, վարձակալության ժամկետի փոփոխություն, վարձավճարների փոփոխություն (օր.՝ ապագա վճարումների փոփոխություն պայմանավորված այդ վարձավճարները որոշելու համար օգտագործված ինդեքսի կամ դրույթի փոփոխությամբ) կամ հիմքում ընկած ակտիվի գնման օպցիոնի գնահատումներում փոփոխություն:

**Վարձաժամկետ վարձակալություններ և փոքրարժեք ակտիվների վարձակալություններ**

Խումբը մեքենաների և սարքավորումների իր կարճաժամկետ վարձակալությունների նկատմամբ (այսինքն՝ այն վարձակալությունները, որոնց վարձակալության ժամկետը մեկնարկի ամսաթվից 12 ամիս և պակաս է, և որոնք չեն պարունակում գնման օպցիոն) կիրառում է կարճաժամկետ վարձակալությունների ճանաչման բացառությունը: Խումբը նաև կիրառում է փոքրարժեք ակտիվների վարձակալությունների ճանաչման բացառությունը այն գրասենյակային գույքի վարձակալությունների նկատմամբ, որոնց արժեքը, ենթադրվում է, որ փոքր է: Վարձաժամկետ վարձակալություններին և փոքրարժեք ակտիվների վարձակալություններին վերաբերող վարձավճարները գծային հիմունքով ծախս են ճանաչվում վարձակալության ժամկետի ընթացքում:

**Դ) Ընթացիկ և ոչ ընթացիկ դասակարգում**

Խումբը ֆինանսական վիճակի մասին համախմբված հաշվետվությունում ակտիվները և պարտավորությունները ներկայացնում է ընթացիկ / ոչ ընթացիկ դասակարգման հիման վրա: Ակտիվը ընթացիկ է, եթե այն.

- ▶ Ակնկալվում է իրացվել կամ նախատեսված է վաճառքի կամ սովորական գործառնական փուլի ընթացքում սպառման համար, կամ
- ▶ Պահվում է հիմնականում առևտրային նպատակով, կամ
- ▶ Ակնկալվում է իրացվել հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսվա ընթացքում, կամ
- ▶ Դրամական միջոց է կամ դրամական միջոցների համարժեք՝ բացառությամբ, եթե ակտիվի փոխանակումը կամ օգտագործումը, պարտավորություն մարելու նպատակով, սահմանափակված է հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը 12 ամսվա ընթացքում:

Բոլոր մնացած ակտիվները ճանաչվում են որպես ոչ ընթացիկ:

Դարտավորությունը ընթացիկ է, եթե.

- ▶ Այն ակնկալվում է մարվել սովորական գործառնական փուլի ընթացքում, կամ
- ▶ Այն հիմնականում պահվում է առևտրային նպատակով, կամ
- ▶ Ենթակա է մարման հաշվետու ժամանակաշրջանից հետո 12 ամսիների ընթացքում, կամ
- ▶ Զերծ անվերապահ իրավունք՝ հետաձգելու պարտավորության մարումը հաշվետու ժամանակաշրջանից հետո նվազագույնը 12 ամիս:

Խումբը դասակարգում է բոլոր մնացած պարտավորությունները որպես ոչ ընթացիկ:

Հետաձգված հարկային ակտիվները և պարտավորությունները դասակարգվում են որպես ոչ ընթացիկ ակտիվներ և պարտավորություններ:

**38. Հաշվապահական հաշվառման նշանակալի քաղաքականությունների ամփոփ նկարագիրը  
(շարունակություն)**

**Ճ) Փոխառության ծախսեր**

Փոխառության ծախսերը, որոնք անմիջականորեն վերագրելի են ակտիվի ձեռքբերմանը, կառուցմանը կամ արտադրությանը, որին անպայմանորեն անհրաժեշտ է ժամանակի մի զգայլ հարցած ըստ իր նշանակության օգտագործմանը կամ վաճառքին պատրաստ լինելու համար (որակավորվող ակտիվին), կապիտալացվում են որպես համապատասխան ակտիվի արժեքի մաս: Փոխառության ծախսերը բաղկացած են տոկոսներից և այլ ծախսերից, որոնք կազմակերպությունը կրում է միջոցների փոխառության հետ կապված:

Այն դեպքերում, եթե միջոցները փոխառվում են հատուկ ծրագրի ֆինանսավորման համար, կապիտալացված գումարը ներկայացնում է փոխառության իրական կատարված ծախսերը: Եթե ծրագրի ֆինանսավորման համար օգտագործված միջոցները ընդհանուր փոխառությունների մաս են կազմում, կապիտալացված գումարը հաշվարկվում է՝ օգտագործելով տվյալ ժամանակահատվածի ընթացքում նմրի համապատասխան ընդհանուր փոխառությունների համար կիրառվող տոկոսադրույթների միջին կշռված մեծությունը:

## Կառավարման մարմինների տարեկան գեկույց

### 1. Ներածություն

Սույն հաշվետվությունը ներկայացնառում է «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության (այսուհետ՝ նաև ԶՊՄԿ կամ Ընկերություն) 2019 թվականի գործունեության արդյունքները և հետագա զարգացման նկարագիրը՝ ներառյալ այն հիմնական ռիսկերի կամ անորոշությունների նկարագիրը, որոնց հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

### 2. «Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատ» ՓԲ ընկերության գործունեության ընդհանուր նկարագիր

ԶՊՄԿ-ն Հայաստանի Հանրապետության առաջատար հանքարդյունահանող ընկերությունն է: Ընկերությունը շահագործում է Քաջարանի հանքավայրը, որը ունի մոլիբդենի և պղնձի հաստատված զգալի պաշարներ: Հանքավայրի շահագործումն սկսվել է 1951թ. և մինչև 1954թ. հանքարդյունահանումն իրականացվել է ստորգետնյա եղանակով: 1954-1962թթ.՝ համակցված եղանակով (ստորգետնյա և բացահանք), իսկ 1962թ.-ից հանքավայրի շահագործումն իրականացվում է միայն բաց եղանակով:

Ընկերության կողմից արդյունահանված հանքաքարի վերամշակումից ԶՊՄԿ-ում արտադրվում է մոլիբդենի և պղնձի խտանյութ: Արտադրված պղնձի խտանյութն արտահանվում է, իսկ մոլիբդենի խտանյութը վերամշակվում է: Մոլիբդենի խտանյութի վերամշակման արդյունքում ստացվում է ֆերոմոլիբդեն, որը հետագայում արտահանվում է Ընկերության կողմից:

### 3. Հիմնական ռիսկերի նկարագիրը

**Շուկայական ռիսկ (արտադրանքի գներ):** ԶՊՄԿ-ի ֆինանսական ցուցանիշների վրա զգալիորեն ազդում են արդյունահանվող հանքաքարում առկա մետաղների (պղինձ և մոլիբդեն) միջազգային շուկայական գների տատանումները: Պատմականորեն այս գներն ունեցել են տատանման լայն տիրույթ, որը պայմանավորված է ԶՊՄԿ-ի

Վերահսկողությունից դուրս բազմաթիվ գործոններով:

**Ռիսկի չեղոքացում.** Շուկայական ռիսկի չեղոքացման կամ նվազեցման նպատակով միջազգային հարթակներում Ընկերությունը օգտագործում է հեջափորման տարբեր տեսակի գործիքներ՝ ֆյուչերս, օպցիոն և այլն: 2019 թվականի ընթացքում Ընկերությունը հեջափորել իր կողմից արտադրվող պղնձի խտանյութում առկա մետաղի ավելի քան 23% կամ 16,175 տոնա:

**Երջակա միջավայր, թափոններ, առողջություն, անվտանգություն:** Բնապահպանական, թափոնների, առողջության և անվտանգության պահպանմանն ուղղված կանոնակարգերի և օրենսդրական դաշտի խստացումը կարող է ավելացնել ԶՊՄԿ-ի գործառնական և կապիտալ ծախսերը, սահմանափակել գործողությունները:

**Ռիսկի չեղոքացում.** Ընկերությունը շարունակաբար արդիականացնում է իր արտադրական գործընթացները՝ դրանք համապատասխանեցնելով բնապահպանական ամենախիստ միջազգային ստանդարտներին (օր՝ Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի (IFC)՝ բնապահպանական ստանդարտներ): Վերջին տարիներին բնապահպանական և աշխատանքի անվտանգության ուղղությամբ Ընկերության ծախսումները կազմում են տարեկան ավելի քան 20 միլիոն ԱՄՆ դոլար:

**Հարկային դաշտի և ռոյալթի փոփոխություն:** Հանքարդյունաբերության մեջ ներգրավված ընկերությունների համար ռոյալթին էական ծախսային հոդված է: Wood Mackenzie խորհրդատվական ընկերության կողմից կատարված հետազոտության արդյունքները փաստում են, որ խոնակի խտանյութ արտադրող աշխարհի առաջատար երկրների շարքում Հայաստանի Հանքապետությունը ռոյալթի արդյունավետ դրույքի տեսանկյունից կարելի է համարել ամենաբարձր դրույքով օրենսդրական կարգավորումներից մեկը:

#### **4. Հիմնական արտադրական և ֆինանսական ցուցանիշներ**

**Արտադրության ծավալ.**

2019 թվականի ընթացքում ընկերությունը վերամշակել է 22,000,000 չոր մետրիկ տոնա (շմտ) հանքաքար, որից արտադրվել է՝ պղնձի 302,674 շմտ խտանյութ, 8,851 տոննա ֆերոմոլիբդեն, և 383 շմտ մոլիբդենի խտանյութ:

*Ամփոփ ֆինանսական ցուցանիշներ.*

Ցուցանիշ	Նազ.դրամ
Արտադրանքի իրացումից հասույթ	195,827,666
Իրացված արտադրանքի ինքնարժեք	-130,972,416
Իրացման ծախսեր	-12,638,613
Վարչական ծախսեր	-14,945,937
Նվիրատվություններ սոցիալական ծրագրերին	-6,508,522
Այլ գործառնական եկամուտ	761,354
Այլ գործառնական ծախսեր	-30,936,246
Ակնկալվող վարկային կորուստներ	257,970
Գործառնական գործունեությունից շահույթ	845,256
Ֆինանսական ծախսեր	-7,996,681
Շահութահարկի գծով ծախս	-7,411,287
<b>Հաջվետու տարվա ընդամենք համապարփակ (վնաս)/շահույթ</b>	<b>-14,562,712</b>
Դեբիտորական պարտք	10,299,128
Կրեդիտորական պարտք	47,932,441

*2019 թվականի փոխառու միջոցների շարժ*

Վարկի կամ փոխառության աղբյուրը	Նոր վարկեր	Մարումներ
Trafigura PTE Ltd	70,000,000 USD	20,232,491 USD
Պարտատոմսեր	50,114,588 USD	-
Պարտատոմսեր	2,503,802,247 AMD	
«Ամերիարանկ» ՓԲԸ	63,610,000 USD	57,720,360 USD
«Արդյունաբան» ՓԲԸ	-	9,220,005 USD
Այլ փոխառություններ	40,362,694 USD	65,292,136 USD
Այլ փոխառություններ	5,000,000,000 AMD	-
<b>Ընդամենը</b>	<b>224,087,282 USD</b>	<b>152,464,992USD</b>
	<b>7,503,802,247AMD</b>	<b>-</b>

*Ամփոփ ֆինանսական գործակիցներ.*

Ցուցանիշի անվանումը	31.12.2019թ.
Սեփական կապիտալի շահութաբերություն (ROE)	-24%
Ակտիվների շահութաբերություն (ROA)	-5%
Զուտ շահույթի մարժա (NPM)	-7%
Դեբիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	5%
Դեբիտորական պարտքերի շրջապատճենի տևողությունն օրերով	18
Պաշարների շրջանառելիության գործակից	20%
Պաշարների շրջապատճենի տևողությունն օրերով	74
Կրեդիտորական պարտքերի շրջանառելիության գործակից	25%
Կրեդիտորական պարտքերի շրջապատճենի տևողությունն օրերով	90

## 5. Կարևոր դեպքերի նկարագիր

Ստորև ներկայացնում ենք այն դեպքերի նկարագիրը, որոնք էական ազդեցություն են ունեցել Ընկերության ֆինանսական վիճակի վրա, ինչպես նաև այն դեպքերը, որոնք ԶՊՄԿ-ի կարծիքով էական են ներդրողների և վարկատուների համար:

Հաշվետու ժամանակաշրջանի համար հարկ է արձանագրել հետևյալ իրադարձությունները:

### **Պարտատոմսերի թողարկում**

2019 թվականի Սեպտեմբեր – Նոյեմբեր ամիսներին թողարկել և տեղաբաշխել է տոկոսային եկամուտ ունեցող պարտատոմսեր՝ 2,500,000 հազար ՀՀ դրամ և 50,000 հազար ԱՄՆ դոլար անվանական արժեքով, մարման ժամկետը՝ մինչև 2022թ.-ը։ Տարեկան տոկոսադրույթները՝ 7,5% դոլարային պարտատոմսերի համար, 11% դրամային։

2019 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ թողարկված պարտատոմսերի համախառն մնացորդը կազմել է 26,246,908 հազար ՀՀ դրամ։

Պարտատոմսերը թողարկվել են Ընկերության կողմից պարտավորությունների, կապիտալ ներդրումային ծրագրերի ֆինանսավորման, ինչպես նաև կապիտալի ֆինանսավորման ներկայիս կառուցվածքի բարելավման համար։ Պարտատոմսերը ցուցակված են Հայաստանի ֆոնդային բորսայում։

### **SARD համակարգի ներդրման աշխատանքների սկիզբ**

Պարտատոմսերի տեղաբաշխման արդյունքում ներգրաված միջոցների հաշվին ֆինանսավորվող հիմնական ներդրումային ծրագիրը՝ SARD համակարգի ներդրումն է։ SARD - ը իրենից ներկայացնում է հանքարարի և դատարկ ապարի տեղափոխման ավտոմատացված երկաթուղային համակարգ։ SARD - ի ներդրումը՝ կախված հանքարարի և դատարկ ապարի տեղափոխման ծավալներից, թույլ կտա Ընկերությանը տարեկան մինչև 20 միլիոն ԱՄՆ դոլար չափով նվազեցնել տեղափոխման ծախսերը։ 2019 թվականին մեկնարկել է համակարգի ներդրումը, որը ավարտին կհասցվի 2021 թվականի ընթացքում։

### **ԶՊՄԿ-ի բաժնետոմսերի հետ գնում Ընկերության կողմից**

2019 թվականի ընթացքում Ընկերությունը իր բաժնետերերից ձեռք է բերել 2,061,253

հատ բաժնետոմս՝ ընդամենք 79,164,677 հազար ՀՀ դրամ արժողությամբ:

2019 թվականի ընթացքում Ընկերությունը հայտարարել է լրացուցիչ 687,078 հատ սովորական անվանական բաժնետոմս(յուրաքանչյուրը 20 հազար ՀՀ դրամ արժեքով) (2018՝ 215,666 բաժնետոմս):

### ***Ստրիմինգային պայմանագրերի հետ գնում***

2016 և 2017 թվականների ընթացքում Ընկերությունը կնքել է պղնձի մատակարարման երկու սթրիմինգային պայմանագրեր: Սթրիմինգի էռաջունն այն է, որ խտանյութը վաճառվում է հարաբերականորեն զեղչված գնով, պայմանով, որ գնորդը վաճառքի յուրաքանչյուր խմբաքանակի դիմաց վճարումից զատ պայմանագիրը կնքելիս կատարում է նաև միանվագ վճար (կանխավճար) պայմանագրով մատակարարման ողջ ծավալի դիմաց:

Կնքված սթրիմինգային պայմանագրերի շրջանակներում Ընկերությունը ստանցել է համապատասխանաբար 25 միլիոն և 50 միլիոն ԱՄՆ դոլար գումարների չափով կանխավճարներ և պարտավորվել է վաճառել 150,000 և 480,000 խոնավ մետրիկ տոննա պղնձի խտանյութ 2017-2031 և 2018-2041թթ. ընթացքում՝ մինչև 70% զեղչված գներով:

2019 թվականին Ընկերությունը դադարեցրեց այս սթրիմինգային պայմանագրերը: Դադարեցված պայմանագրի համաձայն Ընկերությունը պարտավոր է վճարել դադարեցված պայմանագրերի դիմաց համապատասխանաբար 105 մլն ԱՄՆ դոլար:

Ստրիմինգային պայմանագրերի դադարեցումը թույլ կտա Ընկերության կախված մետաղների շուկայական գների մակարդակից ավելացնել տարեկան հասույթը մոտ 20 մլն ԱՄՆ դոլարով:

## 6. Ընկերության իրկարաժամկետ արտադրական պահն

	Ամփոփ										Ընդամենը տարի	
	1	2	3	4	5	6	7	8	9	10	11	
Զմն 1,768,241	1,260,000	1,225,759	1,798,000	2,100,000	2,030,000	2,100,000	2,100,000	1,972,000	1,950,000	1,827,000	1,869,000	22,000,000
Հն պարտնությունը վերմշաված հանքաքարտը	% 0,350	0,355	0,264	0,228	0,240	0,225	0,233	0,253	0,279	0,240	0,235	0,217 0,256
Մօ պարունակությունը վերմշաված հանքաքարտը	% 0,0437	0,0645	0,0643	0,0570	0,0768	0,0777	0,0768	0,0754	0,0711	0,0805	0,0756	0,0763 0,0707
Հն ասրանքային կորզում	% 86.1	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0 85.1
Մօ ասրանքային կորզում	% 87.4	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0	85.0 85.2
Հն պարունակությունը խոտանյութում	% 22.5	23.0	23.0	23.0	23.0	23.0	23.0	23.0	23.0	23.0	23.0	23.0 23.0
Մօ պարունակությունը խոտանյութում	% 50.1	49.0	49.0	49.0	49.0	49.0	49.0	49.0	49.0	49.0	49.0	49.0 49.0
Հնն 23,654	16,531	11,959	15,140	18,587	16,910	18,106	19,596	20,362	17,303	15,894	14,995	209,038
Հնն 1,349	1,410	1,367	1,778	2,798	2,736	2,798	2,747	2,432	2,723	2,396	2,474	27,007
Հնն 5,327	3,802	2,751	3,482	4,275	3,889	4,164	4,507	4,683	3,980	3,656	3,449	47,965
Մոլիգենն Մօ խոտանյութում	Հնն 676	691	670	871	1,371	1,341	1,346	1,192	1,174	1,334	1,212	13,248

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մենք՝ պատասխանատու անձինք, հավաստիացնում ենք, որ մեր լավագույն տեղեկացվածության համաձայն ֆինանսական հաշվետվությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ակտիվների և պարտավորությունների, ֆինանսական վիճակի, եկամուտների և ծախսերի իրական պատկերը, իսկ կառավարման մարմինների միջանկյալ գեկույցում ներառված տեղեկությունները ճշգրիտ և լիարժեք ձևով արտացոլում են Ընկերության ընդհանուր վիճակը, բիզնեսի արդյունքները և զարգացումը և ներառում է այն հիմնական ոխսկերի նկարագիրը, որի հետ առնչվել կամ առնչվում է Ընկերությունը:

### ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԱՆՁԻՆՔ

Անուն, Ազգանուն	Պաշտոն	Պատասխանատվության շրջանակ
Թոմաս Հայլ	Խորհրդի նախագահ	<p>Որպես Խորհրդի նախագահ՝</p> <ul style="list-style-type: none"><li>✓ մասնակցել Խորհրդի նիստերին,</li><li>✓ մասնակցել Խորհրդի որոշումների քվեարկությանը.</li><li>✓ կազմակերպում է Խորհրդի աշխատանքները.</li><li>✓ գումարում է Խորհրդի նիստերն ու նախագահում է դրանք.</li><li>✓ կազմակերպում է Խորհրդի նիստերի արձանագրության վարումը:</li></ul>
Մհեր Պոլոսկով	Գլխավոր տնօրեն	<ul style="list-style-type: none"><li>✓ տնօրինում է Ընկերության գույքը, այդ թվում ֆինանսական միջոցները, գործարքներ է կնքում Ընկերության անունից.</li><li>✓ ներկայացնում է Ընկերությունը ՀՀ-ում և արտասահմանում.</li><li>✓ սահմանված կարգով կնքում է պայմանագրեր, այդ թվում աշխատանքային.</li><li>✓ բանկերում բացում է Ընկերության հաշվարկային և այլ հաշիվներ.</li><li>✓ հաստատում է Ընկերության աշխատանքային ներքին կանոնակարգը.</li><li>✓ իր իրավասության սահմաններում արձակում է հրամաններ, հրահանգներ, տալիս է կատարման համար պարտադիր ցուցումներ և վերահսկում դրանց կատարումը:</li></ul>

Նարեկ Ամբարյան	Գլխավոր տնօրենի առաջին տեղակալ	<ul style="list-style-type: none"> <li>✓ գլխավոր տնօրենի բացակայության ժամանակ փոխարինում է վերջինիս ամբողջ ծավալով իրականացնելով գլխավոր տնօրենի լիազորությունները.</li> <li>✓ համակարգում է ընկերության ոչ արտադրական ստորաբաժանումների գործունեությունը.</li> <li>✓ գլխավոր տնօրենի հրամանով նախատեսված դեպքերում համակարգում է ընկերության այլ ստորաբաժանումների գործունեությունը:</li> </ul>
Թումաս Հոփման	Գլխավոր տնօրենի տեղակալ	<ul style="list-style-type: none"> <li>✓ գլխավոր տնօրենի հանձնարարությամբ համակարգում է ընկերության առանձին ծրագրերի իրագործումը:</li> </ul>
Աննա Սեղրակյան	Ֆինանսական տնօրեն	<ul style="list-style-type: none"> <li>✓ ընկերության ֆինանսական գործունեության կառավարում:</li> </ul>
Դավիթ Իսահակյան	Կոմերցիոն տնօրեն	<ul style="list-style-type: none"> <li>✓ ընկերության նյութատեխնիկական ապահովման, վաճառքների, մաքսային ձևակերպումների, բեռնափոխադրումների կազմակերպում:</li> </ul>
Սամվել Ալեքսանյան	Կայուն զարգացման գծով տնօրեն	<ul style="list-style-type: none"> <li>✓ ընկերության բնապահպանական և աշխատանքի անվտանգության քաղաքականության իրականացման ապահովում:</li> </ul>
Գառնիկ Ղազարյան	Արտադրության գծով տնօրեն	<ul style="list-style-type: none"> <li>✓ ընկերության արտադրական գործունեության կազմակերպման ապահովում:</li> </ul>
Վարդան Մարության	Գլխավոր հաշվապահ	<ul style="list-style-type: none"> <li>✓ կազմակերպում է հաշվապահական հաշվառման վարումը, ֆինանսական և հարկային հաշվետվությունների ժամանակին կազմումն ու ներկայացումը,</li> <li>✓ պատասխանատու է հաշվապահական հաշվառման քաղաքականության կիրառման համար,</li> <li>✓ կազմման սկզբնական հաշվառման փաստաթղթերի օրինակելի ձևերի նախապատրաստման աշխատանքները:</li> </ul>